

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Թարգմանությունը՝ Մարիամ Գուրգադյանի
Նախագծի աջակիցներ՝ Գյոթե Ինստիտուտ Վրաստան



Բովանդակություն

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....	6
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՐՁ.....	6
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	8
ԱՅԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	11
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ.....	14
ԲԱՌԱՐԱՆ.....	16
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՈՒՂԵՑՈՒՅՑ.....	21
ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	22
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	22
ԵՊԱ-Ի ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	23
ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	25
ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ.....	27
ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ.....	28
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....	30
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....	32
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....	34
ՀԱՎԵԼՎԱԾ.....	37
ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ.....	37
ԴԱՏԱՐԿ ԱՂՅՈՒՍԱԿ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՄ ՈՒՐԻՇԻՆ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ.....	40
ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՆՄՈՒՇՆԵՐ.....	41
ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻՑ.....	44
ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ.....	52

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ի՞նչ է Եվրոպական պրոֆիլային աղյուսակը

Եվրոպական պրոֆիլային աղյուսակը (ԵՊԱ) գործիք է, որն աղյուսակային ձևով ներկայացնում է օտար լեզվի ուսուցիչների հիմնական իրազեկությունները զարգացման վեց փուլով: Աղյուսակը տրամադրվում է ինը տարբեր լեզուներով:

ԵՊԱ-ի նպատակն է աջակցել օտար լեզվի ուսուցիչներին իրենց մասնագիտական զարգացման հարցում, անկախ նրանից, թե որ օտար լեզուն են նրանք դասավանդում: Դրա հետ մեկտեղ այն նաև հարմար միջոց է մի կողմից լեզվի ուսուցման կենտրոնների և այլ հաստատությունների տնօրենների և կոորդինատորների համար, որոնք պատասխանատու են օտար լեզվի դասընթացների որակի ապահովման համար, մյուս կողմից էլ՝ ուսուցիչներին վերապատրաստող անձանց համար:

Անունից կարելի է արդեն ենթադրել, որ պրոֆիլային աղյուսակը հանդիսանում է ցանց՝ աղյուսակի տեսքով: Աղյուսակի ձախ հատվածում նշվում են դասավանդման իրազեկությունների և որակավորման կատեգորիաները: Աղյուսակի վերևի հատվածում նշված են զարգացման վեց փուլերը՝ սկսնակներից մինչև շատ փորձառու ուսուցիչներ կամ վերապատրաստողներ: Պրոֆիլային աղյուսակի յուրաքանչյուր վանդակում կա համապատասխան նկարագրություն տվյալ կատեգորիայի և զարգացման փուլի վերաբերյալ:

Մասնագիտական զարգացման n^o մոտեցումն է ընկած ԵՊԱ-ի հիմքում

ԵՊԱ-ն ստեղծվել է մի ծրագրի արդյունքում, որը ֆինանսավորվել է Եվրոպական Հանձնաժողովի կողմից և իրականացվել է 2011 թվականի հոկտեմբերից մինչև 2013 թվականի հոկտեմբերը: Ծրագրին մասնակցել են Եվրոպական 9 տարբեր երկրների գործընկերներ, որոնք օտար լեզվի ուսուցման ոլորտում հանդիսանում են տեղական և միջազգային առաջատար հաստատություններ կամ կենտրոններ: Ծրագրի բոլոր գործընկերներն ու նրանց ներկայացուցիչները նշված են շնորհակալական խոսքում (էջ 49):

Ըստ ծրագրի մոտեցման՝ ուսուցիչների վերապատրաստումը հանդիսանում է «դեպի վերև բարձրացող» գործընթաց (bottom-up): Ուսուցիչները զարգացնում են իրենց իրազեկություններն իրենց կրթության շրջանակներում, աշխատանքային ճանապարհի ընթացում ձեռք բերած սեփական փորձի հիման վրա և ուղղորդվելով իրենց անձնական հետաքրքրություններով (տես Mann 2005¹): Ուսուցիչների մասնագիտական զարգացումը կարող է իրականացվել առկա պայմանների սահմաններում տարատեսակ միջոցառումների միջոցով, օրինակ՝ վերապատրաստումներին կամ որևէ լեզվի կենտրոնի կողմից կազմակերպվող կրթական սեմինարներին մասնակցելու միջոցով, կարդալու, սեփական դասալուսմաների կամ կոլեգաների դասերին հետևելու միջոցով, նոր դասընթացի ծրագիր

¹ Mann S. (2005) 'The language teacher's development' in Language Teaching vol. 38.2
http://www2.warwick.ac.uk/fac/soc/al/staff/teaching/mann/mann_s/stateof.pdf

պատրաստելու միջոցով, վերապատրաստողի կողմից ստացած արձագանքի կամ նրա հետ ունեցած զրույցի միջոցով, կոլեգաների հետ ուսումնական նյութերի վերաբերյալ փորձի փոխանակման միջոցով և այլն:

Լեզվի ուսուցման կենտրոնների տնօրեններն իրենց հերթին պարտավորված են խորհրդատվության և արդյունավետ նախաձեռնությունների միջոցով աջակցել և խթանել ոչ միայն առանձին ուսուցչի, այլ նաև ողջ աշխատանքային կազմի մասնագիտական զարգացումը:

Այդ գործընթացների համար պատասխանատու տնօրեններն ու վերապատրաստողները պետք է միշտ հիշեն, որ անհրաժեշտ է ապահովել կենտրոնի կողմից առաջարկվող դասընթացների որակը և հասնել կենտրոնի կողմից առաջադրված նպատակներին: Այս առումով ուսուցիչների մասնագիտական զարգացումը գտնվում է սովորողների, ուսուցիչների և կենտրոնների ղեկավարների համատեղ պատասխանատվության ներքո:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման կարևոր և օգտակար մաս է հանդիսանում սեփական փորձի, հատկապես ամենօրյա (բայց ոչ միայն) դասավանդման փորձի վերլուծումը: Սեփական իրազեկությունները լեզվի ուսուցման տարատեսակ ոլորտներում գնահատելն անդրադարձվող երևույթ է, և այդ անդրադարձը կարող է հանգեցնել նրան, որ յուրաքանչյուր ոք կարողանա ճանաչել սեփական զանրզացման համար անհրաժեշտ իր նպատակները: Պրոֆիլային աղյուսակը, որտեղ նկարագրվում են ուսուցչի դասավանդման հիմնական իրազեկությունները զարգացման տարբեր փուլերում, հնարավոր է դարձնում ավելի հեշտ և համակարգված ձևով գնահատել սեփական անձը: Բացի դրանից, այն նպաստում է, որ ուսուցիչների և լեզվի կենտրոնների տնօրենների կամ վերապատրաստողների միջև երկխոսություն ձևավորվի վերապատրաստումների հետ կապված ցանկությունների կամ կարիքների վերաբերյալ: Տնօրենները կարող են օգտագործել պրոֆիլային աղյուսակը նաև իրենց թիմի ուսուցիչներին գնահատելիս: Աղյուսակում ներկայացված են չափանիշներ, որոնք ձևակերպված են «կարող եմ» նկարագրությունների տեսքով և որոնք նպաստում են, որ սուբյեկտիվությունն ու միակողմանի մոտեցումը հնարավորինս նվազի թե՛ ինքնագնահատման ժամանակ և թե՛ ուրիշին գնահատելիս:

Ի՞նչ նախադրյալներ կան ԵՊԱ-ի ծրագրի հիմքում

Ուսուցիչների համար նախատեսված Եվրոպական պրոֆիլային աղյուսակի վերաբերյալ ծրագրի նպատակներն էին՝

- Հաստատել և զարգացնել 2006 թվականին ըստ EAQUALS-ի հավատարմագրված չափանիշների լեզվի կենտրոններում ներքին օգտագործման համար ստեղծված պրոֆիլային աղյուսակը
- Զարգացնել պրոֆիլային աղյուսակի վերջնական տարբերակը 9 լեզվով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն, բուլղարերեն, հոլանդերեն, թուրքերեն և լեհերեն) և աղյուսակի էլեկտրոնային տարբերակը 4 լեզվով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն)

- Կազմել օգտագործման ուղեցույց ուսուցիչների նպատակային խմբերին դասավանդման իրենց տարատեսակ համատեքստերում օժանդակելու համար

Այն ժամանակ, երբ Բրայան Նորթը և Գայա Մատևան կազմում էին EAQUALS-ի պրոֆիլային աղյուսակը, առաջ քաշվեցին դասավանդման իրազեկությունների ևս երկու նկարագրություն (Նյուբայի կողմից 2006-ին և Քելլիի ու Գրենֆելլի կողմից 2005-ին²): Սակայն երկուսն էլ (առաջինը՝ պրոֆիլային աղյուսակ եվրոպական երկրներում իրականացվող մանկավարժական կրթության համար, իսկ երկրորդը՝ կրթական գործընթացում գտնվող ապագա ուսուցիչների համար ստեղծված հավաքածուն) մշակվել էին ոչ թե փորձառու ուսուցիչների, այլ դեռ ուսման մեջ գտնվող ապագա մանկավարժների համար: Բացի դրանից, EAQUALS-ի պրոֆիլային աղյուսակը մշակվել էր այն ուսուցիչների իրազեկությունների գնահատման համար, որոնք արդեն դասավանդում են, սակայն որոնց դասավանդման փորձը շատ տարբերվում էր իրարից: Նույն նպատակն էր հետապնդում նաև նրա հետնորդը՝ ԵՊԱ-ն: Դրան գումարվում է այն հանգամանքը, որ ԵՊԱ-ն ոչ միայն հասանելի է բազմաթիվ լեզուներով, այլ նաև կարող է հաջողությամբ օգտագործվել բոլոր հնարավոր լեզուները դասավանդող ուսուցիչների կողմից:

Ինչպե՞ս են հաստատվել ԵՊԱ-ն և նրա «կարող եմ» նկարագրությունները

ԵՊԱ ծրագրի մի մաս էր հանդիսանում 5 տարբեր լեզուներով կազմված պրոֆիլային աղյուսակի փորձարկումը եվրոպական 20 երկրներում դասավանդման տարատեսակ համատեքստերում աշխատող մոտ 2000 ուսուցիչների, 60-ից ավել կենտրոնների տնօրենների և 100 վերապատրաստողների միջև: Փորձարկման նպատակն էր ստուգել «կարող եմ» նկարագրությունները և համոզվել, որ դրանք հստակ նկարագրում են իրազեկությունները բոլոր 5 լեզուներում, ինչպես նաև կատարել պրոֆիլային աղյուսակի վերջնական տարբերակի համար անհրաժեշտ բոլոր փոփոխությունները: Այն կարող էր գտնել 9 տարբեր լեզուներով այստեղ՝ <http://www.epg-project.eu>: Նույն տեղում է նաև օգտագործման ուղեցույցը: ԵՊԱ-ի էլեկտրոնային տարբերակին կարող էք ծանոթանալ այստեղ՝ <http://www.egrid.epg-project.eu/en>: Կարևոր է այն հանգամանքը, որ ԵՊԱ-ն չի արտացոլում որևէ ստանդարտներ կամ կանոններ, որոնք պարտադրվում են ուսուցիչներին: Ծրագրի գործընկերներն այն համոզմունքին են, որ ԵՊԱ-ն չպետք է օգտագործվի որպես ուսուցիչներին ղեկավարելու, նրանց առջև կանոններ դնելու, նրանց դասը ներդաշնակության հասցնելու, պարզաստրելու կամ պատժելու միջոց: ԵՊԱ-ի նպատակն է տեղեկացնել նրանց, առաջարկներ անել, կարծիքներ կիսել, աջակցել նրանց իրենց ուժեղ և թույլ կողմերը գնահատելու հարցում և աջակցություն առաջարկել նրանց սեփական զարգացման համար:

² Newby, D., Allan, R., Fenner, A., Jones, B., Komorowska, H. and Soghikyan, K (2006): The European Portfolio for Student Teachers of Languages, EPOSTL http://archive.ecml.at/mtp2/fte/pdf/C3_Epostl_E.pdf

Kelly M, M. Grenfell, R. Allan, C. Kriza and W McEvoy (2004): European Profile for Language Teacher Education -A Frame of Reference http://ec.europa.eu/education/policies/lang/doc/profilebroch_en.pdf



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՏԵԻՍՅՈՒՆ ԱՂՅՈՒՍԱԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՐՁ

1-ին փուլ		2-րդ փուլ		3-րդ փուլ	
1.1	1.2	2.1	2.2	3.1	3.2
<p align="center">Լեզվի իմացություն</p> <ul style="list-style-type: none"> Ուսումնասիրում է օտար լեզուն որևէ ուսումնական հաստատությունում Օտար լեզուն տիրապետում է B1 մակարդակին համապատասխան 	<ul style="list-style-type: none"> Ուսումնասիրում է օտար լեզուն որևէ ուսումնական հաստատությունում Օտար լեզուն տիրապետում է B2 մակարդակին համապատասխան 	<ul style="list-style-type: none"> Օտար լեզվից հանձնել է B2 քննություն, բանավոր խոսքը համապատասխանում է C1 մակարդակին 	<ul style="list-style-type: none"> Հանձնել է C1 քննություն օտար լեզվից Կամ՝ Ունի տվյալ օտար լեզվի բաժնի ավարտական դիպլոմ և լեզվի իմացության C1 մակարդակը հաստատող վկայական 	<ul style="list-style-type: none"> Հանձնել է C2 քննություն օտար լեզվից Կամ՝ Ունի տվյալ օտար լեզվի բաժնի ավարտական դիպլոմ և լեզվի իմացության C2 մակարդակը հաստատող վկայական 	<ul style="list-style-type: none"> Ունի տվյալ օտար լեզվի բաժնի ավարտական դիպլոմ կամ լեզվի իմացության C2 մակարդակը հաստատող վկայական և գործածում է օտար լեզուն շատ բնական կերպով Կամ՝ Օտար լեզվի կրող է
<p align="center">Կրթություն/ Որակավորում</p> <ul style="list-style-type: none"> Օտար լեզվի ուսուցչի կրթություն է ստանում տվյալ պահին որևէ մանկավարժական համալսարանում կամ մասնավոր ինստիտուտում, որը տրամադրում է ճանաչում ունեցող մանկավարժական կրթություն 	<ul style="list-style-type: none"> Ավարտել է մանկավարժական կրթության այն փուլը, որը ներառում է լեզվագիտակցություն և մեթոդիկա/դիդակտիկա և կարող է դասավանդել, սակայն դեռ ավարտական դիպլոմ չունի 	<ul style="list-style-type: none"> Ձեռք է բերել նախնական որակավորում, որի ընթացքում հաջողությամբ անցել է առնվազն 60 ժամ փաստագրված և կառուցվածքային դասավանդման պրակտիկա, որն իր մեջ ներառում է նաև վերահսկվող դասավանդում Կամ՝ Ուսման ընթացքում անցել է օտար լեզվի և/կամ դիդակտիկայի/մեթոդիկայի բազմաթիվ դասընթացներ կամ մոդուլներ, սակայն դեռ չունի ավարտական դիպլոմ 	<ul style="list-style-type: none"> Ունի ավարտական դիպլոմ տվյալ օտար լեզվից, մեթոդիկայի/դիդակտիկայի բաղադրիչ մասով, որն իր մեջ ներառում է վերահսկվող դասավանդում Կամ՝ Ունի օտար լեզվի դասավանդման միջազգային ճանաչում ունեցող վկայական (առնվազն 120 ժամ) 	<ul style="list-style-type: none"> Ունի օտար լեզվի դասավանդման և դիդակտիկայի բակալավրի աստիճան, որի բաղադրիչ մաս է կազմում նաև վերահսկվող դասավանդումը Կամ՝ Ունի օտար լեզվի դասավանդման միջազգային ճանաչում ունեցող վկայական (առնվազն 120 ժամ) և Բացի դրանից՝ Անցել է առնվազն 100 ժամ վերապատրաստման դասընթացներ 	<ul style="list-style-type: none"> Ավարտել է օտար լեզուների դիդակտիկայի կամ ընդհանուր լեզվաբանության մագիստրատուրան, կամ ուսման ընթացքում ուսումնասիրել է համապատասխան առարկաներ, որոնց բաղադրիչ մաս է հանդիսանում վերահսկվող դասավանդումը Կամ՝ Ունի օտար լեզվի դասավանդման հետբուհական կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական վկայական/դիպլոմ (առնվազն 200 ժամ) Ունի լրացուցիչ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՖԷՍԻՍԻՆ ԱՂՅՈՒՄԱԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՐՁ**

						<p>մասնագիտացում (օրինակ մասնագիտական լեզվի դասավանդման, գնահատման, ուսուցիչների վերապատրաստման ոլորտում)</p>
<p>Գնահատվող դասավանդում</p>	<ul style="list-style-type: none"> Դասերի որոշ հատվածներ դասավանդելով՝ փորձ է ձեռք բերում, այնուհետև փոխանակում իր փորձն իր կոլեգայի հետ, որը պետք է արձագանքի դրան 	<ul style="list-style-type: none"> Առանձին դասաժամեր իրականացնելուց նրան արդեն հետևել, ուսումնասիրել և գնահատել են որպես ուսուցչի Դասի առանձին հատվածներ իրականացնելու փորձ ունի համակուրսեցիներից բաղկացած փոքր խմբերում (microteaching - միկրոդասավանդում) 	<ul style="list-style-type: none"> Ունի ուսման ընթացքում իրականացրած դասավանդման առնվազն 2 հաջողված փորձ լեզվական առնվազն 2 մակարդակներում Նրան հետևել են որպես ուսուցչի առնվազն 3 դասաժամ և տվել դրական և փաստագրված արձագանք 	<ul style="list-style-type: none"> Ունի ուսման ընթացքում իրականացրած դասավանդման առնվազն 6 հաջողված փորձ լեզվական առնվազն 2 մակարդակներում Նրան հետևել են որպես ուսուցչի առնվազն 6 դասաժամ, լեզվական 3 կամ ավել մակարդակներում, և յուրաքանչյուրի համար նրան տվել են դրական և փաստագրված արձագանք 	<ul style="list-style-type: none"> Գործնական պրակտիկայի ընթացքում և որպես ուսուցչի նրան հետևել և գնահատել են առնվազն 10 դասաժամ, լեզվական տարբեր մակարդակներում և տարբեր խմբերում, և տվել են դրական, փաստագրված արձագանք 	<ul style="list-style-type: none"> Գործնական պրակտիկայի ընթացքում և որպես ուսուցչի նրան հետևել և գնահատել են առնվազն 14 դասաժամ, և տվել փաստագրված արձագանք Գնահատվել է որպես վերահսկող ուսուցիչ ավելի պակաս փորձ ունեցող կոլեգաների համար
<p>Դասավանդման փորձ</p>	<ul style="list-style-type: none"> Դասավանդել է մի քանի դասաժամ կամ դասի որոշ հատվածներ 1 կամ 2 լեզվական մակարդակներում 	<ul style="list-style-type: none"> Դասավանդում է սեփական դասարաններում կամ խմբերում, սակայն միայն 1 կամ 2 լեզվական մակարդակներում 	<ul style="list-style-type: none"> Ունի 200-ից 800 դասաժամի դասավանդման փորձ իր սեփական դասերի շրջանակներում Ունի դասարաններում կամ փոքր խմբերում դասավանդելու փորձ տարբեր լեզվական մակարդակներում 	<ul style="list-style-type: none"> Ունի 800-ից 2400 դասաժամի դասավանդման փորձ՝ -լեզվական տարբեր մակարդակներում -դասավանդման և ուսման ավելի քան մեկ համատեքստում 	<ul style="list-style-type: none"> Ունի 2400-ից 4000 դասաժամի դասավանդման փորձ՝ -C2-ից բացի բոլոր լեզվական մակարդակներում -դասավանդման և ուսման բազմաթիվ և զանազան համատեքստերում 	<ul style="list-style-type: none"> Ունի մոտ 6000 դասաժամի դասավանդման փորձ Ունի դասավանդման փորձ դասավանդման և ուսման բազմաթիվ և տարատեսակ համատեքստերում Ունի վերահսկող ուսուցչի փորձ



ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փուլ	1.1	1.2	2.1	2.2	3.1	3.2
<p>Դիպակտիկա/ Մեթոդիկա</p>	<ul style="list-style-type: none"> Տեղեկացված է, որ կան լեզվի յուրացման և դասավանդման տարբեր տեսություններ և մեթոդներ Փորձառու կոլեգաների դասերին մասնակցելիս կարող է հասկանալ, թե ինչու է նա կիրառում դասավանդման տվյալ տեխնիկան և ուսումնական նյութերը 	<ul style="list-style-type: none"> Ունի հիմքային գիտելիքներ լեզվի յուրացման և դասավանդման տեսությունների և մեթոդների վերաբերյալ Իր կոլեգաների խորհուրդով կարող է կիրառել դասավանդման նոր տեխնիկա և նոր ուսումնական նյութեր Կարող է որոշել դասավանդման համապատասխան տեխնիկան և ուսումնական նյութերը դասավանդման և ուսման տարբեր համատեքստերի համար 	<ul style="list-style-type: none"> Ծանոթ է լեզվի յուրացման և դասավանդման տեսություններին և մեթոդներին Ծանոթ է լեզվական երկու կամ ավել մակարդակներում իրականացվելիք դասավանդման տեխնիկաներին և ուսումնական նյութերերին Կարող է տարբերել, թե արդյոք տվյալ տեխնիկան և ուսումնական նյութերը համապատասխանում են դասավանդման և ուսման տարբեր համատեքստերին Կարող է հաշվի առնել համապատասխան խմբերի պահանջները՝ դասավանդման իր սեփական մեթոդները և տեխնիկաներն ընտրելիս 	<ul style="list-style-type: none"> Շատ լավ տիրապետում է լեզվի յուրացման տեսություններին, մեթոդներին, դասավանդման ոճերին և ռազմավարություններին Դասավանդման տարբեր տեխնիկաներ և ուսումնական նյութեր կիրառելիս կարող է ճանաչել համապատասխան տեսական հասկացությունը Կարող է ըստ առժամվույն գործադրել դասավանդման բազմաթիվ տեխնիկաներ և գործողություններ 	<ul style="list-style-type: none"> Կարող է տեսականորեն հիմնավորել այն բոլոր դասավանդման մեթոդները, որոնք ընկած են բազմաթիվ տեխնիկաների և ուսումնական նյութերի հիմքում Կարող է գործադրել դասավանդման տեխնիկաների, գործողությունների և ուսումնական նյութերի լայն շրջանակ 	<ul style="list-style-type: none"> Մանրակրկիտ գիտելիքներ ունի լեզվի յուրացման տեսությունների և մեթոդների ոլորտում և կարող է այդ հարցերի շուրջ խորհուրդներ տալ իր կոլեգաներին Կարող է դասալսումներից հետո իր կոլեգաներին տալ գործնական, մեթոդական ճիշտ արձագանք, որպեսզի նրանք զարգացնեն դասավանդման տեխնիկաների իրենց շրջանակը Կարող է իր կոլեգաներին առաջարկել առաջադրանքներ և ուսումնական նյութեր լեզվական բոլոր մակարդակների համար, ինչպես նաև կազմել դրանք
<p>Դասերի և դասընթացների կազմակերպում</p>	<ul style="list-style-type: none"> Կարող է դասի պլանում ճիշտ կերպով իրար միացնել ուսումնական տարբեր գործողություններ, ինչպես պահանջվում է առկա ուսումնական 	<ul style="list-style-type: none"> Կարող է դասագրքում ներկայացված ուսումնական գործողությունները համալրել Կարող է ապահովել առանձին դասերի միջև ներդաշնակ կապակցելիությունը՝ հաշվի առնելով նախորդ դասերի արդյունքները 	<ul style="list-style-type: none"> Կարող է օգտագործել ուսումնական պլաններ և այլ սահմանված նյութեր՝ դասը կշռադրատված և խմբի մասնակիցների պահանջներին համապատասխան ծրագրելու համար Կարող է ծրագրել դասի տարբեր փուլերը և 	<ul style="list-style-type: none"> Կարող է կազմակերպել մի դասընթաց կամ դասընթացի մի հատված՝ հաշվի նստելով ուսումնական պլանի, մասնակիցների պահանջների և առկա ուսումնական 	<ul style="list-style-type: none"> Մասնակիցների պահանջների հանգամանալից վերլուծության հիման վրա կարող է կազմել մանրակրկիտ և կշռադրատված դասընթացային պլան, որն իր մեջ ներառում է կրկնողություն և շարունակություն 	<ul style="list-style-type: none"> Կարող է պատրաստել հատուկ դասընթացներ տարբեր համատեքստերի համար, որոնք հաշվի են նստում համապատասխան լեզվաբանական և հաղորդակցական թեմաների հետ Կարող է դասերի և դասընթացների

	<p>նյութերում</p>	<ul style="list-style-type: none"> • Կարող է տրված դասի պլանն այնպես հարմարեցնել, որ ուսումնական հաջողություններն ու բարդություններն ըստ առժանվոյն հաշվի առնվեն 	<p>նրանց ժամային իրականացումը՝ համապատասխան տարբեր ուսումնական նպատակների</p> <ul style="list-style-type: none"> • Կարող է համեմատել տարբեր ուսանողների պահանջները և հաշվի առնել դրանք դասի հիմնական և մասնակի նպատակների պլանավորման ժամանակ 	<p>նյութերի հետ</p> <ul style="list-style-type: none"> • Կարող է ինքնուրույն առաջադրանքներ կազմել, որոնց մեջ ներառված է ուսումնական նյութերի լեզվաբանական և հաղորդակցական ներուժը • Կարող է կազմել՝ առաջադրանքներ՝ անհատական պահանջները և դասընթացի նպատակները հաշվի առնելու համար 	<ul style="list-style-type: none"> • Կարող է ուսումնական նյութերի համար կազմել համապատասխան առաջադրանքներ լեզվական տարբեր մակարդակների համար • Կարող է օգտագործել ուսումնական գործընթացում ի հայտ եկող բարդությունների վերլուծությունը հետագա դասերի ժամանակ քայլեր ձեռնարկելու համար 	<p>կազմակերպման հարցում ուղղորդել իր կողմնակցներին գնահատման ժամանակ և անհատական պահանջները հաշվի առնելիս</p> <ul style="list-style-type: none"> • Կարող է պատասխանատվություն կրել ուսումնական պլանների վերանայման և տարբեր դասընթացների ծրագրի համապատասխան բաշխման հարցում
<p>Փոխգործակցության վերահսկում</p>	<ul style="list-style-type: none"> • Կարող է տալ հստակ ցուցումներ և որոշակի գործունեություն կազմակերպել՝ համապատասխան ուղեկցության ներքո 	<ul style="list-style-type: none"> • Կարող է վերահսկել ուսուցիչ-ուսանող փոխգործակցությունը • Կարող է դասն անցկացնել թե պլենար աշխատանքով և թե զույգային կամ խմբային աշխատանքով, և տալ հստակ աշխատանքային առաջադրանքներ • Դասագրքում տրված գործունեությունների հիման վրա կարող է մասնակիցներին ներգրավել զույգային և խմբային աշխատանքի մեջ 	<ul style="list-style-type: none"> • Արդյունավետ կերպով կարող է դեկավարել զույգային կամ խմբային աշխատանքներ՝ եզրափակելով դասը պլենար աշխատանքով • Կարող է վերահսկել անհատական և խմբային գործունեությունները • Կարող է տալ հստակ արձագանք 	<ul style="list-style-type: none"> • Ուսումնական նպատակներին համապատասխան՝ կարող է անցկացնել բազմակողմանի և հավասարակշռված դաս՝ պլենար, խմբային և զույգային աշխատանքով հազեցած • Կարող է իրականացնել առաջադրանքների վրա հիմնված դաս (task based learning) • Կարող է արդյունավետ կերպով վերահսկել ուսանողների գործունեությունը • Կարող է տալ/խթանել հստակ արձագանք 	<ul style="list-style-type: none"> • Կարող է առաջադրանքների վրա հիմնված (task based learning) խմբային աշխատանքն այնպես կազմակերպել, որ ուսումնական գործունեությունները միաժամանակ իրականացվեն • Կարող է անհատական և խմբային աշխատանքը ստույգ և հստակ վերահսկել • Կարող է տարբեր ձևերով անհատական արձագանք տալ/խթանել • Կարող է վերահսկումն ու արձագանքը հետագա ուսումնական գործունեությունների զարգացման համար կիրառել 	<ul style="list-style-type: none"> • Կարող է կազմակերպել տարբերակված առաջադրանքներով հարուստ անհատական և խմբային աշխատանք, այնուհետև հետևել, վերլուծել և նպաստել դրան • Բազմաթիվ հնարների օգնությամբ կարող է տալ/խթանել արձագանք

<p>Գնահատում</p>	<ul style="list-style-type: none"> Կարող է իրականացնել դասագրքում նշված ուսումնական նպատակների ստուգողական աշխատանքներ և գնահատել դրանք 	<ul style="list-style-type: none"> Կարող է անցկացնել արդեն իսկ մշակված թեստեր ուսումնական առաջընթացի վերաբերյալ (օրինակ՝ կիսամյակային կամ տարեկան թեստեր) և գնահատել դրանք Կարող է անցկացնել արդեն իսկ մշակված բանավոր թեստեր ուսումնական առաջընթացի վերաբերյալ Կարող է մշակել անցած նյութը կրկնելու համար համապատասխան գործողություններ և իրականացնել դրանք 	<ul style="list-style-type: none"> Կարող է անցկացնել կանոնավոր թեստեր ուսումնական առաջընթացի վերաբերյալ, որոնք ունեն նաև բանավոր մաս Կարող է օգտագործել թեստերի և գնահատման արդյունքները ուսումնական ոլորտները տարբերակելու/ճանաչելու համար Կարող է հստակ արձագանք տալ ուսանողների ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ և առաջնայնություն դնել հետագա ինքնուրույն աշխատանքի համար 	<ul style="list-style-type: none"> Կարող է ընտրել և անցկացնել առաջադրանքներ ուսանողների արդյունքները կանոնավոր կերպով գնահատելու համար, որպեսզի ստուգվի լեզվական առաջընթացն ու հմտությունները Գրավոր աշխատանքներում կարող է օգտագործել համաձայնեցված նշաններ համապատասխան սխալների տեսակներն ուղղելու համար՝ նպաստելու ուսանողների լեզվական գիտակցության բարձրացմանը Կարող է թեստավորում նախապատրաստել և կորդինացնել այն 	<ul style="list-style-type: none"> Կարող է կազմել հատուկ նյութեր և առաջադրանքներ (գրավոր և բանավոր) ուսանողների առաջընթացը ստուգող թեստերի համար Կարող է օգտագործել ուսանողների փոխգործակցությունը ցուցադրող տեսագրություններ, որպեսզի աջակցի նրանց իրենց ուժեղ և թույլ կողմերը ճանաչելու հարցում Լավ տեղեկացված է Եվրոպական համընդհանուր չափորոշիչների վերաբերյալ և կարող է դրանց օգնությամբ ճիշտ գնահատել ուսանողի գրելու և խոսելու հմտությունները 	<ul style="list-style-type: none"> Կարող է կազմել բոլոր հմտություններն ու քերականական և բառապաշարային գիտելիքները գնահատելու համար նախատեսված առաջադրանքներ լեզվական բոլոր մակարդակների համար Կարող է ճշգրիտ կերպով կիրառել Եվրոպական համընդհանուր չափորոշիչների չափանիշները գրելու և խոսելու հմտությունները լեզվական բոլոր մակարդակներում գնահատելու համար և ավելի պակաս փորձ ունեցող կոլեգաներին այդ հարցում սատարելու համար Կարող է կազմել խորացված թեստեր՝ ուսանողի լեզվական մակարդակը որոշելու համար Կարող է ըստ ԵՀԶ-ի չափանիշների անցկացնել ստանդարտիզացման դասընթացներ
-------------------------	--	---	--	---	---	---



ԱՅԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փուլ	1.1	1.2	2.1	2.2	3.1	3.2
<p>Միջմշակութային իրազեկություններ</p>	<ul style="list-style-type: none"> • Հասկանում է, որ լեզվի ու մշակույթի հարաբերությունը շատ կարևոր գործոն է օտար լեզվի դասավանդման ու յուրացման գործընթացում 	<ul style="list-style-type: none"> • Գիտի, որ մշակութային հայեցակետերը դասի ժամանակ մեծ կարևորություն ունեն • Կարող է ուսանողներին ներկայացնել մշակութային դրսևորումների և ավանդույթների էական տարբերությունները • Կարող է մշակութային և սոցիալական տարասեռ խմբերում ստեղծել հանդուրժողական և ըմբռնումով լի մթնոլորտ 	<ul style="list-style-type: none"> • Հասկանում է տարատեսակ կարծրատիպերը և կարողանում է հաշվի նստել դրանց հետ • Կարող է գործադրել սեփական միջմշակութային գիտակցությունը ուսանողների գիտելիքները մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ ընդլայնելու համար, ինչպես օրինակ, քաղաքավարություն, ժեստերի լեզու և այլն • Կարող է նկատել դասի ժամանակ միջմշակութային խնդիրներից խուսափելու անհրաժեշտությունը և նպաստում է փոխադարձ մասնակցության և հարգանքի ձևավորմանը 	<ul style="list-style-type: none"> • Աջակցում է ուսանողներին նախապաշարմունքներն ու կարծրատիպերը վերլուծելու հարցում • Կարող է իր դասի ժամանակ անդրադառնալ միջմշակութային արդիական խնդիրներին, ինչպես օրինակ քաղաքավարությունը, ժեստերի լեզուն և այլն • Կարող է օգտագործել ուսումնական նյութեր, որոնք նախատեսված են խմբի մշակութային հորիզոնի համար և ի վիճակի է այն ընդլայնել համապատասխան գործողությունների միջոցով 	<ul style="list-style-type: none"> • Կարող է օգտագործել համացանցային տեղեկություններ, նախագծային աշխատանքներ և պրեզենտացիաներ ինչպես սեփական, այնպես էլ ուսանողների միջմշակութային ըմբռնումն ու գնահատումն ընդլայնելու համար • Կարող է զարգացնել ուսանողների ունակությունը վերլուծել սոցիալական և մշակութային ընդհանրություններն ու տարբերությունները և քննարկել դրանք • Կարող է կանխատեսել միջմշակութային հնարավոր խնդիրները և սովորեցնել ուսանողներին արդյունավետ կերպով լուծել դրանք 	<ul style="list-style-type: none"> • Ունի միջմշակութային գիտելիքի լուրջ պաշար և կարող է ավելի պակաս փորձ ունեցող կուլեգաներին աջակցել այդ հարցում • Տարբեր հնարներ կիրառելով՝ կարող է զարգացնել կուլեգաների ունակությունները, որպեսզի նրանք միջմշակութային բարդ իրավիճակներում, թյուրիմացությունների և սահմանային իրավիճակների ժամանակ ճիշտ կողմնորոշվեն • Կարող է մշակել միջմշակութային ուսումնական գործողություններ, առաջադրանքներ և նյութեր թե իր և թե կուլեգաների համար, և այնուհետև արձագանք տալ դրանց

<p>Լեզվական գիտակցություն</p>	<ul style="list-style-type: none"> Կարող է օգտագործել բառարաններ, քերականական ձեռնարկներ և այլն՝ որպես տեղեկատվական աղբյուր Կարող է պարզ և լեզվական համապատասխան մակարդակում հաճախ տրվող հարցերին պատասխանել 	<ul style="list-style-type: none"> Կարող է ուսանողներին տալ լեզվական ձևերի և գործածության ճիշտ օրինակներ՝ A1-B1 մակարդակներին համապատասխան Կարող է պատասխանել օտար լեզվի վերաբերյալ տրվող հարցերին, ընդ որում պատասխանները կարող են լինել ոչ սպառիչ, սակայն համապատասխան են A1-B1 մակարդակներում սովորող ուսանողների խնդիրներին 	<ul style="list-style-type: none"> Կարող է ուսանողներին տալ լեզվական ձևերի և գործածության ճիշտ օրինակներ՝ ըստ համապատասխան լեզվական մակարդակի, չհաշված լեզվական բարձր մակարդակները (C1-C2) Կարող է պատասխանել օտար լեզվի վերաբերյալ տրվող հարցերին, չհաշված լեզվական բարձր մակարդակները (C1-C2) 	<ul style="list-style-type: none"> Կարող է ուսանողներին տալ լեզվական ձևերի և գործածության ճիշտ օրինակներ լեզվական գրեթե բոլոր մակարդակներում, բացի C2-ից Կարող է տեսնել ուսանողների լեզվական խնդիրները և հասկանալ դրանց պատճառները Կարող է պատասխանել օտար լեզվի վերաբերյալ լեզվական բոլոր մակարդակներում տրվող հարցերին, բացի C2-ից 	<ul style="list-style-type: none"> Կարող է ուսանողներին տալ լեզվական ձևերի և գործածության ճիշտ օրինակներ գրեթե բոլոր մակարդակներում և լեզվական բոլոր մակարդակներում Կարող է հստակ և մանրամասնորեն պատասխանել օտար լեզվի վերաբերյալ տրվող հարցերին և պարզ բացատրություններ տալ դրանց Կարող է բազմաթիվ հնարների միջոցով սատարել սովորողներին, որպեսզի նրանք ինքնուրույն հաղթահարեն իրենց լեզվական անվստահություններն ու սխալները 	<ul style="list-style-type: none"> Կարող է ճշգրիտ և մանրամասնորեն պատասխանել լեզվի և դրա գործածության տարատեսակ ոլորտներին վերաբերող ուսանողների կողմից տրվող բոլոր հարցերին Կարող է բացատրել C1 և C2 մակարդակներում հանդիպող լեզվական ձևերի, նշանակության և գործածության նուրբ երանգները
<p>Տեխնիկական իրազեկություններ</p>	<ul style="list-style-type: none"> Կարող է օգտագործել տեքստային ծրագրեր՝ ըստ սահմանված կարգի աշխատանքային թերթեր կազմելու համար Կարող է որոնել անհրաժեշտ ուսումնական նյութերը համացանցում Կարող է դասի համար անհրաժեշտ նյութերը ներբեռնել համացանցից 	<ul style="list-style-type: none"> Կարող է դասը մշակել համացանցից վերցրած տեքստերով, նկարներով, գրաֆիկներով և այլն Կարող է էլեկտրոնային տվյալներն ու թղթապանակները տրամաբանական կառուցվածքով դասակարգել 	<ul style="list-style-type: none"> Կարող է օգտվել ստանդարտ Windows/Mac ծրագրերից, ներառյալ Media Player-ը Կարող է սովորողներին ու կոլեգաներին նպատակահարմար առցանց նյութեր խորհուրդ տալ Կարող է դասի ժամանակ օգտագործել համացանցին միացված պրոյեկտոր, DVD և այլ 	<ul style="list-style-type: none"> Կարող է ուսանողների համար կազմել առցանց առաջադրանքներ և վերահսկել դրանք Կարող է օգտագործել համապատասխան տեխնիկական ծրագրերը նկարների, վիդեո և աուդիո ֆայլերի համար 	<ul style="list-style-type: none"> Կարող է ուղղորդել ուսանողներին իրենց անհատական պահանջների համար ընտրել և կատարել համապատասխան առցանց վարժությունները Կարող է մշակել և համապատասխանեցնել աուդիո և վիդեո ֆայլեր Կարող է կոլեգաներին ցույց տալ, թե ինչպես է պետք օգտվել նոր 	<ul style="list-style-type: none"> Կարող է ուղղորդել սովորողներին լեզու սովորելու գործընթացում ճիշտ ձևով օգտվել դասասենյակում առկա թվային ողջ տեխնիկայից (ինտերակտիվ գրատախտակ, իրենց բջջային սարքերը, պլանշետները և այլն) Կարող է ցույց տալ կոլեգաներին, թե ինչպես կարելի է առկա թվային տեխնիկայի և

					<p>համակարգչային ծրագրերից</p> <ul style="list-style-type: none"> • Կարող է կողորդինացնել նախագծային աշխատանքները թվային տարատեսակ տեխնիկայով (կամերա, համացանց, սոց. ցանցեր) • Կարող է ինքնուրույն լուծել դասասենյակում թվային տեխնիկայի հետ առաջացող բոլոր խնդիրները 	<p>համացանցային ռոսուրսների ներուժը օգտագործել դասավանդման համար</p> <ul style="list-style-type: none"> • Կարող է մշակել զուգադրական դասի (blended-learning) մոդուլներ՝ օգտվելով հատուկ ուսումնական հարթակներից, ինչպես օրինակ՝ moodle-ը
--	--	--	--	--	--	---



ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ

Փուլ	1.1	1.2	2.1	2.2	3.1	3.2
<p>Մասնագիտական վերապատրաստում</p>	<ul style="list-style-type: none"> • Ձգտում է սեփական դասի և կատարած այլ աշխատանքների վերաբերյալ արձագանք ստանալ • Ձգտում է խորհուրդներ և աջակցություն ստանալ կոլեգաներից և ուսուցչի ձեռնարկներից 	<ul style="list-style-type: none"> • Գործում է համաձայն տվյալ լեզվի կենտրոնի առաքելության և ընդհանուր կանոնակարգերի • Հաղորդակցվում է մյուս կոլեգաների հետ ուսանողների և դասի նախապատրաստակա ն աշխատանքների վերաբերյալ • Արձագանքում է դասալսումներից հետո տրված մասնագիտական կարծիքներին 	<ul style="list-style-type: none"> • Օգտվում է հնարավորությունից կոլեգաների հետ միասին (թիմային դասավանդում) դասավանդել լեզվական մեկ կամ երկու մակարդակներում • Արձագանքում է կոլեգաների կողմից կատարած դասալսումներից հետո տրված կարծիքներին • Նպաստում է կազմակերպչական աշխատանքներին և արդյունավետ կառավարման զարգացմանը և դրական արձագանք է տալիս կենտրոնի ներսում կատարվող փոփոխություններին և մարտահրավերներին 	<ul style="list-style-type: none"> • Օգտվում է այն հնարավորությունից, որ իր վերադասները կամ կոլեգաները հետևեն իր դասերին և արձագանք տան դրանց • Ակտիվ մասնակցություն ունի աշխատանքային կոլեկտիվի զարգացման համար իրականացվող գործողություններին և պատրաստվում է դրանց • Ակտիվորեն նպաստում է լեզվի կենտրոնի և դրա կրթական-վարչական համակարգի զարգացմանը 	<ul style="list-style-type: none"> • Հանդես է գալիս որպես ավագ մանկավարժ ավելի պակաս փորձ ունեցող կոլեգաների համար • Իրականացնում է վերապատրաստում ներ այլ կոլեգաների աջակցությամբ կամ նախապես մշակված նյութերի օգնությամբ • Հետևում է կոլեգաների դասերին և տալիս նրանց օգտակար արձագանք • Հարմար առիթի դեպքում ստանձնում է իր վրա պատասխանատվություն տարբեր նախագծերի վերաբերյալ, որոնք պետք է ծառայեն կենտրոնի զարգացմանը 	<ul style="list-style-type: none"> • Մշակում է վերապատրաստման մոդուլներ ավելի պակաս փորձ ունեցող ուսուցիչների համար • Իրականացնում է վերապատրաստման ծրագրեր • Հետևում է գնահատում է այն կոլեգաներին, որոնք դասավանդում են լեզվական բոլոր մակարդակներում • Կազմակերպում և իրականացնում է դասալսումների հնարավորություններ կոլեգաների միջև
<p>Ազմինիստրացիա</p>	<ul style="list-style-type: none"> • Կատարում է ընթացիկ պարտականություններ, ինչպես օրինակ լրացնում է ներկայության թերթիկը կամ հետևում, որ ուսումնական նյութեր բաժանվեն կամ հետ վերադարձվեն 	<ul style="list-style-type: none"> • Ժամանակին և ճիշտ ձևով հանձնում է պահանջված պլանները և դասի արձանագրությունները Արդյունավետ կերպով ստուգում է տնային աշխատանքներն ու թեստերը 	<p>Արդյունավետ կերպով գնահատում է և զեկուցում Վարում է հստակ և լավ կազմակերպված դասամատյան ժամանակին է հանձնում բոլոր փաստաթղթերը և պահանջվող արձագանքները</p>	<p>Արդյունավետ կերպով կատարում է ուսուցչի վարչական պարտականությունները Մտածում է նաև ավելի քիչ հանդիպող խնդիրների մասին և ժամանակին կատարում դրանք</p> <p>Ըստ պահանջված կարգի զբաղվում է սովորողների կողմից առաջ քաշված</p>	<p>Մյուսների հետ միասին կոորդինացնում է վարչական խնդիրները, ըստ անհրաժեշտության հավաքում և փոխանցում տեղեկություններ, զեկույցներ, կարծիքներ և նմանատիպ այլ բաներ Մտանձնում է պատասխանատվություն որոշակի վարչական խնդիրների վերաբերյալ,</p>	<p>Անհրաժեշտության դեպքում կարող է իր վրա վերցնել դասընթացների կոորդինացման խնդիրները</p> <p>Անհրաժեշտության դեպքում աշխատում է կենտրոնի տարբեր ոլորտներում (գրանցում, գործավարություն, հովանավորություն, ծնողներ և այլն)</p> <p>Ակտիվ կերպով նպաստում</p>

				հարցերով, հարցումներով և արձագանքներով	ինչպես օրինակ՝ ուսուցիչների կոնֆերանսների կազմակերպումը, կամ դասընթացների գնահատման արդյունքներ հավաքելը, վերլուծելը և հաշվարկելը	էլեկվի կենտրոնի աշխատանքային ընթացքի զարգացմանը կամ բարելավմանը
--	--	--	--	---	---	--

ԲԱՌԱՐԱՆ

Առաջադրանքների վրա հիմնված (task-based) ուսուցում`

Լեզվի դասընթացի ժամանակ կիրառվող աշխատանքային ձև, որի ընթացքում լեզվի յուրացումն իրականացվում է հաղորդակցական և ինտերակտիվ գործողությունների և առաջադրանքների միջոցով:

Ուսանողների պահանջների վերլուծություն`

Այս վերլուծության շնորհիվ կարելի է պարզել, թե ինչու են ուսանողները ցանկանում սովորել սովյալ լեզուն: Վերլուծությունը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, թե ինչ նպատակով և որ համատեքստում է գործածվում ուսումնասիրվող լեզուն:

Լեզվական ճիշտ ձևերի և գործածության օրինակներ`

Լեզվական կառուցվածքների ճիշտ և նպատակահարմար օրինակներ, որոնք ուսանողները կարող են կրկնօրինակել, սովորել և այնուհետև կիրառել:

Գնահատվող դասավանդում`

Դաս, որին ներկա է եղել և պաշտոնապես հետևել է մեկ այլ փորձառու կոլեգա, վերահսկող ուսուցիչ կամ մանկավարժ:

Զուգադրական/համադրական ուսուցում (Blended Learning)`

Սովորական դասի և որոշակի փուլերով համակարգչային առցանց ուսուցման համադրություն:

Թվային նյութեր`

Ուսումնական թվային նյութեր (տեքստեր, նկարներ, աուդիո, վիդեո ֆայլեր), որոնք հասանելի են մեզ համացանցի միջոցով:

Փաստագրված արձագանք`

Գրավոր տեսքով փաստագրված նկարագիր դասալսման վերաբերյալ, որն իրականացրել է մեկ այլ փորձառու ուսուցիչ կամ մանկավարժ:

Լեզվի մակարդակը որոշելու համար նախատեսված թեստավորում`

Թեստավորման արդյունքում նախապես որոշվում է ուսանողի լեզվի իմացության մակարդակը, որպեսզի նրան հնարավոր լինի առաջարկել իր մակարդակին համապատասխան դասընթաց:

ԵՊԶ (Եվրոպական համընդհանուր չափորոշիչներ)

ԵՊԶ-ն փաստաթուղթ է, որում նշված են լեզվի իմացության նկարագրությունները, այսպես կոչված «կարող եմ» նկարագրությունները, և ըստ որի օտար լեզու սովորողների հաղորդակցական իրազեկությունները դասակարգվում են լեզվի իմացության տարբեր մակարդակների համաձայն (A1, A2; B1, B2; C1, C2): Այդ մակարդակները հիմք են հանդիսանում օտար լեզվի իմացության ստանդարտացված/նորմավորված գնահատման համար:

Խմբային աշխատանք

Դասի ժամանակ կիրառվող սոցիալական ձև, որի ընթացքում ուսանողների տարբեր խմբեր միաժամանակ և միասին կատարում են որոշակի ուսումնական գործողություններ:

Ինտերակտիվ գրատախտակ

Մեծ ինտերակտիվ էկրան, որը կապված է համակարգչի և պրոյեկտորի հետ:

Միջազգային ճանաչում ունեցող վերապատրաստման վկայական

Փաստաթուղթ, որը հաստատում է օտար լեզվի դասավանդման համակարգված վերապատրաստման հաջող ավարտը:

Համատեքստ

Դասավանդման ընդհանուր միջավայրի բոլոր գործոնները, որոնք ազդեցություն ունեն ուսումնական գործընթացի և դասի վրա, օրինակ՝ երկիրը, ուսանողների տարիքը (տարրական/միջին դասարաններ, մեծահասակներ), լեզվի կենտրոնի տեսակը (հանրային, մասնավոր) և այլն:

Միսալների ուղղման համաձայնեցված նշաններ

Տարատեսակ նշանների կամ կրճատումների գործածությունը գրավոր աշխատանքների ստուգման ժամանակ համապատասխան սխալների տեսակները տարբերակելու համար (օր.՝ A - Ausdrucksfehler, Gr - Grammatik):

Ուսումնական պլան

Դասընթացների նպատակների, բովանդակության, ծավալի, իրականացման և գնահատման մանրակրկիտ նկարագրություն:

Դասավանդման մոտեցում

Այն ճանապարհը, թե ինչպես են ուսուցիչները կամ տվյալ լեզվի կենտրոնը համապատասխան մեթոդական սկզբունքները կիրառում դասավանդման ժամանակ:

Դասավանդման տեխնիկա`

Որոշակի ձև/միջոց, դասասենյակում տեղի ունեցող գործընթացները վերահսկելու համար:

Արդյունքներ`

Ուսումնական գործընթացների արդյունքները (այն, ինչ ուսանողն իրոք յուրացրել է), որոնք կարող են պարբերաբար տարբերվել ծրագրված ուսումնական նպատակներից:

Ուսումնական առաջընթացը որոշելու թեստեր`

Այս թեստերը նախատեսված են դասընթացի շրջանակներում ձեռք բերված ուսումնական առաջընթացը որոշելու համար:

Ուսումնական հարթակ`

Առցանց սովորելու համար նախատեսված ծրագիր, որը հնարավորություն է տալիս ուսանողներին ուղղորդել, տրամադրել տարատեսակ նյութեր և առաջադրանքներ, հետևել առցանց գործողություններին և արդյունքներին, ինչպես օրինակ` moodle-ը:

Ուսումնական ոճեր`

Անհատական ճանապարհներ/նախասիրություններ համապատասխան տեղեկությունները կամ հմտությունները յուրացնելու համար:

Ուսումնական ռազմավարություն`

Ուսանողների կողմից ընտրված լեզուներ սովորելու և տեղեկությունները կիրառելու, լեզվի բառապաշարը և քերականական օրենքները յուրացնելու նպատակահարմար եղանակը:

Ավագ մանկավարժ`

Փորձառու ուսուցիչ/վերահսկող ուսուցիչ կամ մանկավարժ, որը հմտությունների ու գիտելիքի իր պաշարը կհստում է ավելի պակաս փորձ ունեցող ուսուցիչների հետ, որպեսզի նրանք մասնագիտական առաջընթաց ունենան:

Մեթոդիկա/Դիդակտիկա`

Օտար լեզվի դասավանդման սկզբունքներ և մեթոդներ

Միկրոդասավանդում (microteaching)`

Մանկավարժական մասնագիտացման ժամանակ կիրառվող մեթոդ, երբ ուսանողները դասի մի հատված դասավանդում են այլ ուսանողների խմբի, իսկ ուսուցիչը որպես կանոն հետևում է այդ գործընթացին:

Զույգային աշխատանք՝

Դասի ժամանակ կիրառվող սոցիալական ձև, որի ընթացքում երկու ուսանող միաժամանակ և միասին կատարում են որոշակի ուսումնական գործողություններ:

Անհատական զարգացում՝

Այն մասնագիտական զարգացումն ու առաջընթացը, որը տեղի է ունենում ուսուցչի մոտ դասավանդման փորձի, գիտելիքների ընդլայնման և սեփական դասի անդրադարձի շնորհիվ:

Ստանդարտիզացման դասընթացներ՝

Դասընթացներ, որոնք ապահովում են, որ տվյալ լեզվի ուսուցման կենտրոնում աշխատող բոլոր ուսուցիչներն օգտվեն նույն ԵՀՉ չափանիշներից (օրինակ՝ ԵՀՉ լեզվական մակարդակները՝ ուսանողների գրավոր և բանավոր արդյունքները գնահատելու համար):

Աղբյուրներ՝

Բառարաններ, քերականական ձեռնարկներ, ուսուցչի ձեռնարկներ, տեղեկատուներ և այլն:

Լեզվական գիտակցություն՝

Ուսուցիչների գիտելիքն օտար լեզվի վերաբերյալ (նշանակություն, լեզվական ձևեր և գործածություն) և պատկերացումն այն մասին, թե ինչպես են ընդհանուր առմամբ միասին գործում տվյալ օտար լեզուն և հաղորդակցությունը:

Լեզվի յուրացման տեսություններ՝

Տեսություններ, որոնք նկարագրում են լեզվի յուրացման մեջ առկա հոգելեզվաբանական, ճանաչողական և հուզական գործընթացները: Նրանք նկարագրում են նաև այն պայմանները, որոնց պարագայում լեզվի յուրացումը դրական է ընթանում:

Լեզվի գործածություն՝

Այն ճանապարհը, թե ինչպես են տվյալ օտար լեզվի ժամանակակից լեզվական ձևերը և բառապաշարը գրավոր և բանավոր խոսքում գործածվում:

Կարծրատիպեր՝

Կարծրացած կամ պրիմիտիվ պատկերացումներ, որոնք մարդիկ ունենում են այլ մարդկանց, մշակույթների կամ դրսևորումների նկատմամբ:

Դասընթացի ծրագիր՝

Լեզվի դասընթացի բովանդակության նկարագրության, կազմության և մատուցման հերթականությունը, որի ընթացքում դասավանդում են լեզվական հմտություններն ու գիտելիքները, սովորաբար պետք է նշվի նաև, թե քանի դասաժամ է նախատեսված տվյալ ծրագիրն իրականացնելու համար:

Թիմային դասավանդում՝

Մեկ այլ կոլեգայի հետ միասին դասի համատեղ կազմակերպումն ու իրականացումը:

Թեստեր՝

Գործողություն, որի միջոցով հնարավոր է ստուգել ուսանողների ունակությունները, գիտելիքը և կատարումը: Գոյություն ունեն թեստերի չորս հիմնական տեսակներ՝ ախտորոշիչ թեստ, լեզվական մակարդակը որոշելու թեստ, ուսումնական առաջընթացը որոշելու թեստ և լեզվի իմացությունը որոշելու թեստ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ ՕՏԱՐ
ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՈՒՂԵՑՈՒՅՑ



Հեղինակներ՝

Գալյա Մատևա, Ալբենա Վիտանովա, Սվետլա Տաշևսկա

OPTIMA-ի պատվերով (ծրագրի գործընկեր)

Խորհրդատու և հրատարակիչ՝

Ռիխարդ Ռոսսներ

EZQUALS-ի պատվերով (ծրագրի գործընկեր)

Ուղեցույցը կարևոր օգնություն է Եվրոպական պրոֆիլային աղյուսակի (ԵՊԱ) օգտագործման համար: Այն նպատակ է հետապնդում՝

- ❖ Ներկայացնել պրոֆիլային աղյուսակն ու դրա նպատակները
- ❖ Նկարագրել ԵՊԱ-ի կառուցվածքն ու բովանդակությունը
- ❖ Ներկայացնել ԵՊԱ-ի հիմքում ընկած սկզբունքներն ու ենթադրությունները
- ❖ Նկարագրել ԵՊԱ-ի և ԵՊԱ-ի էլեկտրոնային տարբերակի օգտագործման հնարավորությունները
- ❖ Տալ հատուկ ցուցումներ ԵՊԱ-ի և ԵՊԱ-ի էլեկտրոնային տարբերակի օգտագործման վերաբերյալ՝ հատկապես նպատակային հիմնական խմբերի՝ ուսուցիչների, վերապատրաստողների և լեզվի կենտրոնների տնօրենների համար
- ❖ Պատասխանել ԵՊԱ-ի վերաբերյալ հաճախ տրվող հարցերին
- ❖ Տրամադրել հատուկ տերմինների բառարան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ուսուցիչների համար նախատեսված Եվրոպական պրոֆիլային աղյուսակը (ԵՊԱ, անգլերեն՝ EPG) նորարարական միջոց է, որի **առաջնահերթ նպատակն** է ուսուցիչներին, վերապատրաստողներին և լեզվի կենտրոնների ու այլ հաստատությունների տնօրեններին տրամադրել մի վստահելի գործիք, որպեսզի ուսուցիչների առկա իրազեկությունները տեսանելի դառնան, և դրանցով առաջնորդվելով՝ առաջ տանել նրանց մասնագիտական զարգացումը: Դրանով ԵՊԱ-ն նպատակ է հետապնդում բարձրացնել ուսուցիչների վերապատրաստումների, ինչպես նաև մասնագիտական զարգացման որակն ու արդյունավետության մակարդակը:

ԵՊԱ-ի առանձին նպատակներն են՝

- ❖ Իրականացնել ուսուցիչների ներկայումս առկա դասավանդման հմտությունների և իրազեկությունների ինքնագնահատումն ու պատկերացումը
- ❖ Կազմել տվյալ ուսուցման կենտրոնի ուսուցիչների անհատական կամ խմբային պրոֆիլներ, որոնք հստակ նկարագրությունների շնորհիվ պատկերում են համապատասխան մակարդակը իրազեկությունների տարբեր ոլորտներում:
- ❖ Առանձնացնել նրանց, ովքեր վերապատրաստումների կարիք ունեն, որպեսզի հետագայում հնարավոր լինի կազմել մասնագիտական զարգացման և որակավորման անհատական ծրագրեր:
- ❖ Լեզվի ուսուցման կենտրոններին տնօրեններին տրամադրել մի գործիք, որի միջոցով նրանք կկարողանան ընտրություն կատարել աշխատանքի համար դիմորդների միջև նրանց իրազեկությունների հարցում և որը նրանց համար հիմք կծառայի մանկավարժական արձագանք տալ իրենց աշխատողներին:

- ❖ Նպաստել Եվրոպայում ընդունված մանկավարժական բազմաթիվ սկզբունքների և լեզվի դասավանդման ավանդույթների փոխըմբռնմանը և փորձի փոխանակմանը
- ❖ Խթանել լեզվի դասավանդման չափանիշների թափանցիկությունը և թեթևացնել ուսուցիչների շարժունակությունը Եվրոպայում:



ԵՊԱ-ն չի հանդիսանում ստուգման թերթիկ դասալսումների, հարցազրույցների կամ ուսուցիչների գնահատման համար: Այն կարող է գործածվել **միայն որպես օժանդակ միջոց** ուսուցիչների ընտրության և գնահատման ժամանակ: Աղյուսակի առաջնային նպատակն է պատկերացում կազմել, թե մասնագիտական զարգացման որ փուլում է գտնվում ուսուցիչը և օգնել նրան գիտակցել, թե ինչ է նրան անհրաժեշտ մասնագիտական աճի համար:

ԵՊԱ-Ի ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊԱ-ի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքներն ու ենթադրությունները՝

Իրազեկություններին ուղղված («կարող է» նկարագրության) սկզբունքը

Եվրոպական համընդհանուր չափորոշիչներին (ԵՀԶ) համահունչ՝ ԵՊԱ-ն հնարավորություն է ընձեռում դիտարկել ուսուցիչների իրազեկությունները դրական կողմից, այսինքն կենտրոնանալ այն բանի վրա, թե ինչ գիտի և ինչ կարող է անել ուսուցիչն իր մասնագիտական ուղու որոշակի փուլում: Այս սկզբունքն արտացոլում է նաև ուսուցման, դասավանդման և գնահատման ոլորտներում կիրառելի այն մոտեցումը, որն ուղղված է գործողության վրա (action-oriented):

Նկարագրությունների գումարային բնույթը

Մասնագիտական զարգացման շարունակականությունը պատկերելու համար ԵՊԱ-ի նկարագրությունները դասակարգված են ըստ 3 մեծ փուլերի, որոնք իրենց հերթին բաժանվում են ևս 2 ավելի փոքր փուլի: Յուրաքանչյուր փուլ ներառում է իր մեջ նախորդ փուլում կամ փուլերում նշված իրազեկությունները՝ ընդլայնելով դրանք կամ ավելացնելով նոր իրազեկություններ:

Ինքնագնահատման և ուրիշին գնահատելու սկզբունքը

ԵՊԱ-ն ենթադրում է, որ լեզվի ուսուցման յուրաքանչյուր հաստատության ներսում գոյություն ունի ինքնագնահատման մշակույթ, կամ առնվազն փորձ է կատարվում ձևավորել այն տվյալ գործիքի միջոցով: ԵՊԱ-ն հնարավորություն է ընձեռում ուսուցիչներին հիմնավոր և անաչառ կերպով գնատահել իրենց դասավանդման պրակտիկան: ԵՊԱ-ն քաջալերում է նրանց ինքնագնահատման, որպեսզի նրանք կարողանան հետել և առաջ տանել սեփական մասնագիտական զարգացումը: Վերապատրաստողները և

հաստատությունների տնօրենները կարող են ԵՊԱ-ն օգտագործել որպես ուսուցիչների կարիքները վերապատրաստումների հարցում որոշելու լրացուցիչ միջոց՝ այդպիսով ապահովելով հաստատության մանկավարժական որակի պահպանումը:

Անդրադարձման սկզբունք

Այս սկզբունքը սերտորեն կապված է ինքնագնահատման սկզբունքի հետ: Երբ ուսուցիչներն անդրադարձնում են ինքնագնահատման կամ կոլեգաների, վերապատրաստողների կամ լեզվի կենտրոնների տնօրենների կողմից ուրիշին գնահատելու արդյունքները, ապա նվազում է ինքն իրեն գերագնահատելու կամ թերագնահատելու հավանականությունը: Նրանք սկսում են գիտակցել իրենց սեփական բացերը և ճանաչել, թե ինչ վերապատրաստման կարիք ունեն: ԵՊԱ-ի կիրառումն ազդեցիկ խթան է անդրադարձման և համապատասխան գործողությունների ուղղորդման համար:

Բազմալեզվության սկզբունքը

Օտար լեզու դասավանդելիս ուսուցիչը գործ է ունենում առնվազն երկու լեզվի հետ՝ այն, որը դասավանդվում է (նպատակային կամ օտար լեզու) և ուսանողների մայրենի կամ առաջնային լեզուն: Մեր բազմամշակույթ աշխարհում հավանականությունը մեծ է, որ խմբում կհավաքվեն տարբեր մայրերի լեզուներ ունեցող մասնակիցներ, և որ ուսանողները կտիրապետեն արդեն իսկ մի քանի օտար լեզվի: ԵՊԱ-ն այս փաստին և լեզվի յուրացման հետ կապված դրա հետևանքներին ուղղակիորեն չի անդրադառնում: Սակայն, եթե ուսուցիչները հաշվի են նստում իրենց ուսանողների անհատական նախապայմանների և պահանջների հետ, ապա կարող են դրա միջոցով ուշադրություն հրավիրել նրանց անհատական բազմալեզվության վրա: Սովորողներին ուղղված դասի հատուկ պլանավորման, մեթոդիկայի, փոխգործակցության վերահսկման և միջմշակութային իրազեկությունների շնորհիվ ուսուցիչները կկարողանան ապահովել դասասենյակում առկա բոլոր լեզուների արժևորումը: Այդպես ուսանողներին հնարավոր կլինի քաջալերել կիրառել այն իրազեկությունները, որոնք նրանք ձեռք էին բերել առաջին օտար լեզուն սովորելիս, բացահայտել և ուսումնասիրել լեզուների միջև առկա տարբերություններն ու նմանությունները՝ զարգացնելով նրանց բազմալեզվությունը:

Եվրոպական համընդհանուր չափանիշների անհրաժեշտությունը լեզվի ուսուցման համար

ԵՊԱ-ն առաջարկում է համընդհանուր եվրոպական չափանիշներ ուսուցիչների համար՝ որակավորման, լեզվական իրազեկության, լեզվական գիտակցության, դասավանդման հիմնական իրազեկությունների և ուսուցիչների մասնագիտական դրսևորման վերաբերյալ: Դրա շնորհիվ ուսուցիչները շարժունակությունը Եվրոպայի սահմաններում զգալի կթեթևանա: Այն կխթանի նաև փորձի և լավագույն գործնական պրակտիկայի տեղական և միջազգային փոխանակումը:

Մասնագիտական շարունակական զարգացման պահանջը

ԵՊԱ-ն եվրոպական ուսումնասիրության արդյունք է և ներկայացնում է դասավանդման իրազեկությունների լայն շրջանակը պրոգրեսիայի տեսքով, հետևաբար այն վստահաբար

կարելի է գործածել ուսուցիչների մասնագիտական զարգացման պահանջները բացահայտելու և լեզվի կենտրոնների որակական չափանիշներն ապահովելու համար:

Պրոֆիլային աղյուսակի ազատ բնույթը

Հետևյալ աղյուսակը չպետք է միանշանակ ընդունվի, այն հնարավորություն ունի ընդլայնվելու նոր կատեգորիաների և բնութագրությունների միջոցով՝ հարմարեցվելով տարբեր համատեքստերի: Այն կարող է և պետք է շարունակականորեն զարգացվի:

ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՊԱ-ն ունի մի շարք նկարագրություններ, որոնք ձևակերպված են «կարող է» արտահայտությամբ և որոնք ներկայացնում են լեզվի ուսուցիչների բազմակողմանի գործունեությունը: **Նկարագրությունները** ներկայացնում են ուսուցիչների որակավորման և իրազեկությունների աստիճանաբար աճող պրոգրեսիա: Այդ պրոգրեսիան սկսվում է դեռ ուսման մեջ գտնվող ուսուցիչներից, սկսնակ ուսուցիչներից անցնում է դասավանդման սեփական փորձ ունեցող ուսուցիչների՝ հասնելով շատ փորձառու մասնագետների:

Աղյուսակում պրոգրեսիան հորիզոնական է և բաժանված է ուսուցչի մասնագիտական զարգացման **վեց փուլի**: Ավելի հարմար գործածման համար այդ վեց փուլը միավորվել են երեք ավելի մեծ փուլերում՝ 1.1 և 1.2, 2.1 և 2.2, 3.1 և 3.2: Այս փուլերը ներկայացնում են ուսուցիչների տարբեր որակավորումները կամ փորձը և նրանց իրազեկությունների տարբեր աստիճանները:



Այս փուլերը վերաբերում են այն հիմնական չորս կատեգորիաներին, որոնք նկարագրում են ուսուցչի որակավորումը և իրազեկությունները՝ *որակավորում/փորձ, դասավանդման հիմնական իրազեկություններ, այլ իրազեկություններ և մասնագիտացում*:

Ըստ ուղղահայաց առանցքի՝ ԵՊԱ-ն բաժանվում է ընդհանուր առմամբ **տասներեք կատեգորիայի**, որոնք հանդիսանում են վերը նշված չորս կատեգորիաների ենթակատեգորիաներ:

Ավելի մանրամասն պատկերացման համար տե՛ս աղյուսակում:

Առաջին հիմնական կատեգորիան՝ **որակավորում/փորձ**, բաղկացած է **չորս ենթակատեգորիայից**, որոնք նկարագրում են, թե որ մակարդակում է գտնվում ուսուցիչի օտար լեզվի իմացությունը, նրա կրթությունը կամ որակավորումը, նրա գործնական գործունեությունը կամ զարգացումը գնահատվող դասալսումների միջոցով և նրա դասավանդման փորձը՝ ըստ դասաժամերի քանակի: Այս մոտեցումը փորձ է կատարում

ներկայացնել բնիկ և օտարազգի ուսուցիչների լեզվական իմացության և որակավորման լայն ասպարեզը Եվրոպայում: Երկրորդ հիմնական կատեգորիան՝ **դասավանդման հիմնական իրազեկությունները**, կրկին բաղկացած է **չորս ենթակատեգորիայից**, որոնք նկարագրում են ուսուցիչների գիտելիքներն ու հմտությունները մեթոդիկայի, դիդակտիկայի, դասերի կազմակերպման, փոխգործակցության վերահսկման և գնահատման ոլորտում: Երրորդ հիմնական կատեգորիան՝ **այլ իրազեկությունները**, ներառում է **երեք ենթակատեգորիա**՝ միջմշակութային իրազեկություն, լեզվական գիտակցություն և տեխնիկական իրազեկություններ: Չորրորդ հիմնական կատեգորիան՝ **մասնագիտացումը**, ունի երկու ենթակատեգորիա՝ մասնագիտական զարգացում և ադմինիստրացիա: Այստեղ ամփոփված են այն չափանիշները, թե ինչպես են լուծվում վարչական բնույթի խնդիրները, նկարագրվում է կոլեգաների հետ համագործակցության ունակությունը, ակնկալվում նրանց ներդրումը ինչպես սեփական մասնագիտական զարգացման, այնպես էլ լեզվի ուսուցման կենտրոնի զարգացման հարցում:

ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՄԱԿԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Ինքնագնահատում

Լեզվի ուսուցիչները կարող են կիրառել **ԵՊԱ-ի** նկարագրություններն իրենց սեփական իրազեկություններն առկա կատեգորիաներում գնահատելու համար: Նրանք կարող են դա անել իրենց մասնագիտական ուղու ցանկացած փուլում:

Նրանք պրոֆիլային աղյուսակում ընտրում են համապատասխանող նկարագրությունները, ապա խաչով նշում դատարկ պրոֆիլային աղյուսակի համապատասխան վանդակը (տե՛ս դատարկ պրոֆիլային աղյուսակը և լրացված պրոֆիլային աղյուսակի օրինակները հավելվածում): Դուք կարող եք ուղիներ գտնել Ձեր հետագա անհատական զարգացման համար, ինչպես նաև վերապատրաստողներից դրա համար անհրաժեշտ մասնագիտական խորհուրդներ ստանալ: Դուք կարող եք մի որոշակի ժամանակահատվածի ընթացքում մի քանի անգամ կատարել այդ ինքնագնահատումը որպես լեզվի ուսուցիչ Ձեր սեփական զարգացմանը հետևելու համար: Ինքնագնահատման արդյունքները կարող են շատ օգտակար լինել նոր աշխատատեղի համար դիմելիս:

Ուրիշ անձի գնահատելը

ԵՊԱ-ն հեշտացնում է դպրոցում կամ լեզվի ուսուցման կենտրոններում աշխատակազմի համալրման գործընթացը և առանձին ուսուցիչների կամ ողջ դասախոսական կազմի իրազեկությունների վերլուծությունը: **Էլեկտրոնային ԵՊԱ-ն** հնարավոր է դարձնում որպես խմբային պրոֆիլ արագ, աչքին հաճելի և արդյունավետ կերպով ներկայացնել դասախոսական կազմի իրազեկությունները դիագրամի տեսքով: Ուսուցիչների ինքնագնահատման և ուրիշ անձի գնահատելու միջոցով վերապատրաստողները կարող են որոշել դասախոսական կազմի առաջընթացը և բացահայտել, թե ինչպիսի վերապատրաստումներ են անհրաժեշտ հետագայում:

Վերապատրաստում

Անհատական և խմբային պրոֆիլները, որոնք ստեղծվում են ԵՊԱ-ի օգնությամբ իրականացված ինքնագնահատման և ուրիշ անձի գնահատելու միջոցով, հնարավորություն են տալիս վերապատրաստողներին հատուկ աջակցություն ցուցաբերել, հարիր կրթական և վերապատրաստման ծրագրեր մշակել, խորհուրդներ տալ կենտրոնից դուրս իրականացվող վերապատրաստումների հետ կապված և առհասարակ քաջալերել ուսուցիչներին մասնակցելու տարատեսակ վերապատրաստումների: Վերապատրաստողները կարող են օգտագործել ավելի փորձառու ուսուցիչների ձեռք բերած փորձը՝ ներգրավելով նրանց ավելի պակաս փորձ ունեցող ուսուցիչներին ուղղորդելու գործընթացում կամ քաջալերելով նրանց կենտրոնում իրականացնել որոշ վերապատրաստումներ: Լեզվի ուսուցման կենտրոնի ղեկավարը պետք է ստեղծի անհրաժեշտ պայմաններ (օր.՝ աշխատանքային կամ ֆինանսական), դասախոսական կազմի հետագա զարգացումը և շարունակական վերապատրաստումները հնարավոր դարձնելու համար:

Լեզվի ուսուցման կենտրոնների ղեկավարումը (մենեջմենթ)

Չնայած ԵՊԱ-ն չի ստեղծվել այդ նպատակով, բայց և այնպես այն կարելի է կիրառել որպես լրացուցիչ գործիք լեզվի ուսուցիչների աշխատանքային կազմի գնահատման համար: Այն արդյունավետ է հատկապես այն դեպքում, երբ կենտրոնանում ես առանձին կատեգորիաների կամ նկարագրությունների վրա: ԵՊԱ-ում ձևակերպված ստանդարտ չափանիշներն օգնում են, որպեսզի ղեկավարության որոշումները հնարավորինս անաչառ լինեն (դասախոսական կազմում նոր մասնագետներ ընդունել, ուսուցիչներին նոր առաջադրանքներ հանձնարարել):

Որակի ապահովում

ԵՊԱ-ն ներկայացնում է լեզվի ուսուցիչների որակի, գիտելիքների, հմտությունների և փորձի գնահատման ընդհանուր չափորոշիչներ: Դրա շնորհիվ այն հանդիսանում է վստահելի գործիք տարբեր հաստատություններում և համատեքստերում լեզվի դասընթացների որակի ապահովման համար, քանի որ գնահատման չափանիշները կապված չեն որևէ կոնկրետ հաստատության հետ և համընդհանուր են:

Սերտիֆիկացիա

Ճիշտ մշակված աշխատանքային գործընթացների և այլ գործիքների հետ մեկտեղ ԵՊԱ-ն կարող է հիմք հանդիսանալ լեզվի ուսուցիչների սերտիֆիկացիայի համար:

ՊՐՈՑԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՄԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Անհատ օգտատերեր՝

- ❖ Լեզվի ուսուցիչներ մասնավոր և պետական դպրոցներում/հաստատություններում
- ❖ Լեզվի ոչ փորձառու ուսուցիչներ և սկսնակ մասնագետներ
- ❖ Լեզվի փորձառու ուսուցիչներ
- ❖ Վերապատրաստողներ և ավագ մանկավարժներ (ներակա վերապատրաստում)
- ❖ Կրթողներ և ավագ մանկավարժներ
- ❖ Կրթության և վերապատրաստման համար պատասխանատու անձինք
- ❖ Լեզվի ուսուցման կենտրոնների ղեկավարներ (տնօրեններ)

Հաստատություններ`

- ❖ Լեզվի դպրոցներ
- ❖ Լեզվի բաժիններ դպրոցներում
- ❖ Լեզվի բաժիններ համալսարաններում
- ❖ Օտար լեզվի ուսուցման հաստատություններ
- ❖ Որակի ապահովման հաստատություններ
- ❖ Կրթության նախարարություններ
- ❖ Մանկավարժական կրթության հաստատություններ
- ❖ Աշխատակազմի կառավարման բաժիններ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եթե Դուք ցանկանում եք դառնալ լեզվի ուսուցիչ կամ արդեն լեզվի ուսուցիչ եք, ապա **ԵՊԱ-ն** կամ **Էլեկտրոնային ԵՊԱ-ն** արժեքավոր գործիք է, որով Դուք **ինքնուրույն** կարող եք գնահատել Ձեզ և Ձեր դասավանդման փորձը, ինչպես նաև կարող եք հետևել Ձեր մասնագիտական զարգացմանը: **Սյատեղ Դուք կարող եք գտնել հարմար տարբերակներ, թե ինչպես պրոֆիլային աղյուսակի միջոցով կայացնեք արագ և հիմնավորված որոշումներ:**

Հասնել ճիշտ որակավորման

Դուք ցանկանում եք դառնալ **լեզվի ուսուցիչ**, բայց այն լեզուն, որը մտադրված էք դասավանդել, Ձեր մայրենի լեզուն չէ: Դուք սովորել եք այդ լեզուն, բայց չունե՞ք հավաստագրված (սերտիֆիկացված) որակավորում, որը Ձեզ տալիս է դասավանդելու իրավասություն: **ԵՊԱ-ն** Ձեզ **«կրթություն/փորձ» կատեգորիայում** ցույց կտա, թե ինչպիսի լեզվական և մանկավարժական որակավորումներ են Ձեզ հարկավոր դասավանդելու համար: Գուցե Դուք մտածում եք ստանդարտացված քննություն հանձնելու մասին կամ փնտրում եք մանկավարժական պրակտիկայի հնարավորություններ, որպեսզի կարողանաք ներկայացնել ուղեկցվող և գնահատվող դասավանդման Ձեր փորձը: Եթե Դուք լեզվի կրող եք, ապա Դուք, հավանաբար, փնտրում եք կրթական հաստատություն, որտեղ Դուք կարող եք ձեռք բերել միջազգային ճանաչում ունեցող վկայական:

Ձեռք բերել գնահատվող դասավանդման փորձ

Դուք **մասնագիտացման փուլում գտնվող ուսուցիչ եք:** ԵՊԱ-ի **«գնահատվող դասավանդում» կատեգորիայի** միջոցով Դուք կհասկանաք, թե ինչպիսի կարևորություն ունի դասավանդման այն տեսակը, երբ հետևում են Ձեր դասին և արձագանք տալիս դրան: Դուք կփորձեք հնարավորինս հաճախ դասավանդել, լինի դա խմբակային կամ միկրոդասավանդման ձևով, թե տարբեր մակարդակներում առանձին դասաժամեր դասավանդելով: Դուք առիթներ կփնտրեք, որ Ձեզ հաճախակի հետևեն ուղեկցող ուսուցիչներ կամ կոլեգաներ: Դուք կփաստագրեք նրանցից ստացած արձագանքները, իսկ բոլոր ցուցումներն ու խորհուրդները կկիրառեք Ձեր դասավանդման պրակտիկայում: Դուք ջանք կգործադրեք ստանալ փաստագրված արձագանքներ դասալսումների տեսքով, եթե իսկապես սկսել եք դասավանդել, այսինքն՝ խումբ եք վերցրել:

Պատկերացում կազմել սեփական կարիքների վերաբերյալ

Դուք **սկսնակ եք** և ցանկանում եք ընդարձակել Ձեր գիտելիքները լեզվի յուրացման տեսությունների և դասավանդման մեթոդների, ոճերի և ռազմավարությունների վերաբերյալ: ԵՊԱ-ի **«դիդակտիկա/մեթոդիկա» կատեգորիան** Ձեզ կուղղորդի այդ հարցում: Դուք կանոնավոր կերպով մասնակցում եք Ձեր լեզվի կենտրոնում կազմակերպվող վերապատրաստումներին, քանի որ ցանկանում եք տվյալ կատեգորիայում հասնել 2.2, այնուհետև՝ 3.1 փուլին, ինչը հնարավոր է միայն ներակա վերապատրաստման միջոցով: Իսկ, օրինակ, գնահատման ոլորտում Ձեր իրազեկությունը կատարելագործելու համար Դուք կարող եք հետազայում մասնակցել Ձեր հաստատությունում իրականացվող ստանդարտիզացման դասընթացներին (տե՛ս **«գնահատում» կատեգորիան**):

Ձեռք բերել նոր հմտություններ

Դուք **փորձառու ուսուցիչ** եք: Դուք, օրինակ, առաջին անգամ պատրաստվում եք դասավանդել բազմալեզու խմբում և նկատում եք, որ Ձեզ պետք է զարգացնել Ձեր միջմշակութային իրազեկությունները: Այդ հարցում Ձեզ կօգնի **«միջմշակութային իրազեկություններ» կատեգորիան**: Արդյունքում Դուք կսկսեք դասի ընթացքում համապատասխանաբար ուղղորդել Ձեր գործողությունները, որպեսզի Դուք և Ձեր ուսանողներն ավելի լավ ըմբռնեք միջմշակութային տարատեսակ հարցերը: Դուք կհասկանաք, որ ուսանողները բախվում են մշակութային և սոցիալական ընդհանրությունների և տարբերությունների հետ: Կամ Դուք, օրինակ, ուսումնասիրում եք Ձեր ուսանողների մշակութային սովորույթները, որպեսզի կարողանաք կանխատեսել միջմշակութային բարդ իրավիճակները և նպաստեք, որ ուսանողները նման հարցերի պարագայում կարողանան իրենց ճիշտ դրսևորել:

Դուք **փորձառու ուսուցիչ** եք և դասավանդում եք 10 տարուց ավել: Դուք նկատում եք, որ որոշ ուղորդներ, որոնք ազդեցություն ունեն դասավանդման վրա, ինչպես օրինակ թվայնացումը, շատ արագ են զարգանում: Այդ իրավիճակին պատրաստված լինելու համար փորձեք բարելավել Ձեր տեխնիկական իրազեկությունները: Այս հարցում Ձեզ կօգնի **«տեխնիկական իրազեկություն» կատեգորիան**: Դուք կարող եք փորձարկել համակարգչային տարբեր ծրագրեր, ծանոթանալ էլեկտրոնային գրատախտակներին (եթե դրանք արկա են Ձեր հաստատությունում), ինչպես նաև էլեկտրոնային պրեզենտացիայի այլ ձևերի հետ, փորձարկել նախագծային աշխատանքները թվային սարքերով և օգտագործել ուսումնական հարթակներ, ինչպես, օրինակ, moodle-ը:

Մասնագիտանալ

Դուք **փորձառու ուսուցիչ** եք: Դուք գտնվում եք 3.1 ու 3.2 փուլերի միջև և զգում եք, որ ի վիճակի եք կատարել վերապատրաստումների հետ կապված առաջադրանքներ: Դուք հետևում եք **«կրթություն/փորձ» կատեգորիային** և ծրագրում, օրինակ, մասնակցել հետբուհական մագիստրոսական դասընթացի կամ ձեռք բերել միջազգային ճանաչում ունեցող որևէ համարժեք վկայական: Կամ Դուք խնդրում եք, որպեսզի լեզվի կենտրոնում Ձեզ ներգրավեն ներակա վերապատրաստումներում, կամ ինքներդ եք առաջարկում վերապատրաստման ծրագրեր: Դուք կարող եք Ձեզ նաև առաջադրել որպես ուցեկցող ուսուցիչ կենտրոնում իրականացվող դասալսումների համար (տե՛ս **«մասնագիտական զարգացում» կատեգորիան**):

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դուք պատասխանատու եք **լեզվի դասընթացների որակի ապահովման համար** և կոորդինացնում եք մի խումբ կոլեգաների վերապատրաստումները լեզվի ուսուցման կենտրոնում: Ձեր առջև խնդիր է դրված՝ մշակել և իրականացնել անհատական կամ խմբային վերապատրաստման ծրագրեր, որոնք հաշվի են առնում ուսուցիչների հատուկ կարիքները: Դուք պատասխանատու եք կրթական ծրագրերի մշակման համար: **Այստեղ Դուք կարող եք գտնել հարմար տարբերակներ, թե ինչպես ԵՊԱ-ի օգնությամբ կայացնեք արագ և հիմնավորված որոշումներ:**

Գնահատել առանձին ուսուցիչների դասավանդման իրազեկությունները

Դուք կարող եք օգտագործել **ԵՊԱ-ն** կամ դրա որոշ բաժիններ՝ առանձին ուսուցիչների դասավանդման իրազեկությունների ընթացիկ գնահատման համար: Դրա համար Դուք կարող եք օգտագործել ուսուցիչների կողմից կատարված ինքնագնահատումները և դրանք համեմատել Ձեր դասալուսման և հետագա քննարկման արդյունքների հետ: Դուք կարող եք ԵՊԱ-ի հիման վրա իրականացված ինքնագնահատման և ուրիշ անձի գնահատելու վերաբերյալ գրույցներ վարել՝ ուժեղ և թույլ կողմերը որոշելու և գնահատման հնարավոր տարբերությունները քննարկելու նպատակով: Այդ ժամանակ Դուք կարող եք կենտրոնանալ համապատասխան կատեգորիայի կամ ենթակատեգորիայի, հարկ եղած դեպքում նույնիսկ առանձին նկարագրության վրա: Այսպես Դուք կարող եք հետևել առանձին ուսուցիչների իրազեկություններին և մասնագիտական զարգացման փուլերին՝ փաստագրելով դրանք:

Ստեղծել խմբային պրոֆիլներ

Ուսուցիչների անհատական պրոֆիլները միավորելով՝ Դուք կարող եք ստեղծել խմբային պրոֆիլ: **Էլեկտրոնային ԵՊԱ-ն** հնարավորություն կտա ստանալ մի խումբ լեզվի ուսուցիչների իրազեկությունների ընդհանուր աղյուսակային պատկերը դիագրամների տեսքով: Նմանատիպ փաստաթուղթը կարող է լեզվի ուսուցման կենտրոնների ներսում, ինչպես նաև այդ կենտրոններից դուրս որակի ապահովման գործընթացում բավականին արդյունավետ լինել: Իսկ լեզվի ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի մշակման համար առավելությունը կայանում է նրանում, որ Դուք ցանկացած ժամանակ կարող եք պատկերացում կազմել ընդհանուր խմբի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ: Այդ տեղեկություններն օգնում են նաև որոշում կայացնելիս, թե արդյոք կոլեգաները կարող են իրենց փորձն ու իրազեկությունները կիսել մյուսների հետ, և եթե այո, ապա հատկապես ովքեր: Այն, ի վերջո, հեշտացնում է որոշել, թե վերապատրաստման որ ոլորտները Դուք կարող եք ինքներդ ապահովել և երբ է անհրաժեշտ ներգրավել արտակա վերապատրաստողների:

Մշակել և իրականացնել վերապատրաստման ծրագրեր

Անհատական կամ խմբային պրոֆիլները, որոնք ստեղծվում են ԵՊԱ-ի օգնությամբ կատարված գնահատման միջոցով, արժեքավոր օգնություն են անհատական վերապատրաստման, ինչպես նաև կոլեգաների համար նախատեսված վերապատրաստման ծրագրեր մշակելիս: Եթե ինքնագնահատման կամ կողմնակի գնահատման ժամանակ, օրինակ, պարզվում է, որ ուսուցիչներից մեկը խմբակային

աշխատանք հանձնարարելու և այն ուղղորդելու հարցում դժվարություններ ունի (տե՛ս «**փոխազդեցության վերահսկում**» **կատեգորիան**), ապա Դուք որպես վերապատրաստող կարող եք աջակցել նրան՝ կազմակերպելով ավելի շատ դասալսումներ և գնահատման գրույցներ՝ ուղղորդելով ուսուցիչներին մասնակցել փորձառու կոլեգաների դասերին կամ առաջարկելով նրանց մասնագիտական գրականություն: Կամ, եթե Դուք, օրինակ, խմբային պրոֆիլից ելնելով հասկանում եք, որ այդ խմբում լեզվի ուսուցիչների մեծամասնությունը դժվարություններ ունի ուսանողների գրավոր և բանավոր հմտություններն ըստ Եվրոպական համընդհանուր չափորոշիչների գնահատելիս (տե՛ս «**գնահատում**» **կատեգորիան**), ապա կարող եք կազմակերպել վերապատրաստումներ, որոնք վերաբերվում են Եվրոպական համընդհանուր չափորոշիչներին, բանավոր արդյունքների տեսագրությունների վերլուծությանը կամ գրավոր աշխատանքների պրակտիկ գնահատմանը:

Մշակել կրթական ծրագրեր

ԵՊԱ-ի կատեգորիաները և նկարագրությունները կարող են խթան հանդիսանալ կրթական ծրագրերի մշակման հարցում: «**Վերահսկվող դասավանդում**» **կատեգորիան** կարող է, օրինակ, նպաստել, որ կրթության ընթացքում իրականացվող դասավանդման պրակտիկայի սահմանված չափը (վերահսկվող և գնահատվող դասաժամերի թիվը) ավելանա: «Միջմշակութային իրազեկություններ» կամ «տեխնիկական իրազեկություններ» կատեգորիաները կարող են նպաստել, որպեսզի այդ իրազեկությունների զարգացումը համակարգված ձևով ներմուծվի կրթության գործընթացների մեջ: Ի վերջո, ԵՊԱ-ն կարող է նպաստել, որ ձևավորվի սկսնակ ուսուցիչներին խրախուսելու մշակույթ, որպեսզի նրանք պրոֆիլային աղյուսակն օգտագործեն որպես ինքնավերլուծության և սեփական գործողությունները ճիշտ ուղղորդելու գործիք:

Հատուկ իրազեկությունների զարգացումն առաջ մղել

ԵՊԱ-ն օգտագործելու միջոցով տվյալ կենտրոնում վերապատրաստման համար իրավասու անձը կենտրոնանում է առանձին ուսուցիչների ուժեղ կողմերի վրա: Եթե որևէ ուսուցիչ, առավելապես հետաքրքրվում է մեթոդիկայով և դիդակտիկայով, կամ լեզվի յուրացման տեսություններով (տե՛ս «**մեթոդիկա/դիդակտիկա**» **կատեգորիան**), ապա Դուք կարող եք նրան առաջարկել տվյալ թեմայի շրջանակներում մշակել և իրականացնել վերապատրաստում մյուս կոլեգաների համար, կամ կարող եք խթանել նրան մագիստրոսական աշխատանք կատարել այդ բնագավառում: Եթե Դուք, օրինակ, նկատում եք, որ մեկ այլ ուսուցիչ շատ լավ կարողանում է բացատրել լեզվական կառուցվածքները կամ լեզվական ճիշտ ձևերի ու լեզվի գործածման օրինակներ բերել (տե՛ս «**լեզվական գիտակցություն**» **կատեգորիան**) կամ կարողանում է գրավոր աշխատանքներում սխալների ուղղման համար հատուկ համաձայնեցված նշաններ օգտագործել (տե՛ս «**գնահատում**» **կատեգորիան**), ապա Դուք կարող եք առաջարկել, որպեսզի տվյալ ուսուցիչը կազմակերպի պրակտիկ սեմինարներ այդ իրազեկությունները զարգացնելու վերաբերյալ: Եվ վերջապես, եթե ուսուցիչներից մեկը գիտակ է տեխնիկական հարցերում (տե՛ս «**տեխնիկական իրազեկություն**» **կատեգորիան**), ապա կարելի է նրան խնդրել, որպեսզի նա առցանց ուղղորդի հետաքրքրված ուսուցիչների մի խումբ: Այսպես ուսուցիչներից ոմանք աստիճանաբար կդառնան վերապատրաստողներ, ինչպես որ նկարագրված է 3.2 փուլում:

Աջակցել լեզվի ուսուցման կենտրոնների ղեկավարության որոշումներին

ԵՊԱ-ի համակարգված օգտագործման միջոցով վերապատրասման համար իրավասու անձինք կարող են օգնել կենտրոնների ղեկավարներին անձնակազմի ընտրության և զարգացման հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Պրոֆիլային աղյուսակից կարելի է օգտվել դիմորդների ընտրության, նոր և փորձառու ուսուցիչների թեկնածության դիտարկման, ինչպես նաև ուսուցիչների և կենտրոնի հետագա զարգացումների համար անհրաժեշտ խնդիրները հաշվի առնելու ժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դուք լեզվի ուսուցման որևէ հաստատության ղեկավար եք և Ձեր գործառույթներից մեկն է համալրել աշխատակազմը և նպաստել աշխատողների զարգացմանը: Դուք սերտորեն համագործակցում եք այն անձի հետ, ով Ձեր կենտրոնում պատասխանատու է վերապատրաստման համար: Այստեղ **Դուք կարող եք գտնել հարմար տարբերակներ, թե ինչպես պրոֆիլային աղյուսակի օգնությամբ կայացնեք արագ և հիմնավորված որոշումներ:**

Աշխատանքի ընդունել նոր ուսուցիչ

Դուք պետք է որոշեք, թե աշխատանքի ընդունվող ուսուցիչն ինչ պրոֆիլ պետք է ունենա: Դուք ցանկանում եք հաշվի առնել նրա լեզվի իմացության որոշակի մակարդակը, մեթոդական հմտությունը և համապատասխան դասավանդման փորձը (տե՛ս «**Լեզվի իմացություն**» և «**դասավանդման փորձ**», «**դասավանդման հիմնական իրազեկություններ**» կատեգորիաները): ԵՊԱ-ն կօգնի Ձեզ նկարագրել դասավանդման այն իրազեկություններն ու փորձը, որոնց կարիքն այդ պահին նկատելի է կենտրոնում: Բացի դրանից, ԵՊԱ-ի օգնությամբ հնարավոր է ձևակերպել լրացուցիչ հարցեր դիմորդների նախնական ընտրության և հետագա հարցազրույցի համար:

Ձևավորել ուսուցիչների հավասարակշիռ, բազմակողմանի կազմ

Դուք ցանկանում եք պատկերացում կազմել ուսուցիչների պրոֆիլների վերաբերյալ՝ նրանց իրազեկությունները բազմակողմանի դարձնելու և հավասարակշռության հասցնելու նպատակով, որպեսզի լեզվի կենտրոնն էլ ավելի ճշգրիտ արձագանք տա ուսանողների/նպատակային խմբերի բոլոր պահանջներին: ԵՊԱ-ի կամ **Էլեկտրոնային ԵՊԱ-ի** օգնությամբ Դուք կարող եք կազմել յուրաքանչյուր ուսուցչի պրոֆիլն իր իրազեկությունների վերաբերյալ: Եթե Դուք այնուհետև Էլեկտրոնային ԵՊԱ-ի միջոցով միավորեք առանձին պրոֆիլները, դարձնելով դրանք մեկ խմբային պրոֆիլ, ապա կարող եք ստանալ Ձեր աշխատակազմի պրոֆիլի մանրամասն պատկերը: Դա լավ հիմք կհանդիսանա աշխատակազմում ցանկալի իրազեկությունների զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորման, ուսուցիչներին նոր պատասխանատվություն փոխանցելու կամ կենտրոնի համար անհրաժեշտ այլ իրազեկություններ ունեցող ուսուցիչների աշխատանքի ընդունելու հարցերում:

Գնահատել դասի որակը

Եվրոպական պրոֆիլային աղյուսակ ուսուցիչների համար

Դուք ցանկանում եք լեզվի դասավանդման որակային չափանիշների վերաբերյալ Ձեր գիտելիքները թարմացնել և բարելավել որակի ապահովման կարգը Ձեր կենտրոնում: Դուք պետք է Ձեր ուսուցիչների ընդհանուր կամ առանձին իրազեկությունները (տե՛ս «**դասերի կազմակերպում**», «**գնահատում**» **կատեգորիաները**) համեմատեք լեզվի ուսումնական այլ հաստատությունների ուսուցիչների որակավորումների հետ: Այդ դեպքում ԵՊԱ-ի համեմատական չափանիշները կարող են վստահելի ուղեցույց լինել Ձեզ համար: Դրա համար Դուք և Ձեր աշխատակազմը պետք է ծանոթանաք ԵՊԱ-ի տարբեր կատեգորիաներում և ենթակատեգորիաներում նշված չափանիշների և նկարագրությունների հետ: Այդ ընդհանուր չափանիշները կարող են Ձեզ օրինակ ծառայել, ինչպես նաև խթանել, որ Դուք նկատեք Ձեր ուսուցիչների առանձնահատուկ հատկանիշները:

Աջակցություն ցուցաբերել ուսուցիչներին գնահատելիս

ԵՊԱ-ի կիրառումն ինքնագնահատման և ուրիշին գնահատելու ժամանակ, անշուշտ, չի կարող ամբողջովին փոխարինել Ձեր սեփական գնահատումն ուսուցիչների հիմնական իրազեկությունների վերաբերյալ, սակայն կարող է օգնել, որ այն ավելի արդյունավետ ընթանա: Այսպես Դուք կարող եք Ձեր աշխատակիցների ինքնագնահատումները համեմատել վերապատրաստողների և Ձեր սեփական գնահատումների հետ: Այդ մեկնաբանումները կհեշտացնեն վերապատրաստումների և հետագա կրթական ծրագրերի փոխհամաձայնեցված կազմակերպումը:

Գնահատման ժամանակ Դուք կարող եք առանձնացնել իրազեկությունների հատուկ ոլորտներ, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն կենտրոնի զարգացման համար (օրինակ, եթե անսպասելիորեն գործ ունեք տարասեռ խմբերի հետ (տարբեր ազգություններ, դասավանդման և ուսման տարատեսակ սովորույթներ, կրոնական ուղղվածություններ և այլն)): Նման դեպքերում ճիշտ կլինի կենտրոնանալ բացառապես **ԵՊԱ-ի «միջմշակութային իրազեկություններ» կատեգորիայի**, այլ ոչ թե ողջ աղյուսակի վրա:

Հիմնվելով Ձեր կենտրոնում անհրաժեշտ պահանջների վրա՝ ճիշտ կլինի գնահատելիս ավելացնել նոր ենթակատեգորիաներ կամ «կարող եմ» նկարագրություններ (որոնք, օրինակ, վերաբերում են ուսուցիչների սոցիալական իրազեկություններին կամ էլ երիտասարդ ուսանողների կամ տարբեր կազմակերպությունների աշխատակիցներին դասավանդելու յուրահատուկ ունակություններին):

Ընտրել համապատասխան ուսուցիչներ հատուկ դասընթացների համար

Դուք պետք է ընտրեք որոշակի պրոֆիլով մի ուսուցիչ որևէ կազմակերպության համար նախատեսված դասընթացներն իրականացնելու համար: Այդ ուսուցչին անհրաժեշտ են հատուկ ունակություններ լեզվի դասընթացը կազմակերպության համատեքստում ծրագրելու համար (տե՛ս «**դասերի և դասընթացների կազմակերպում**» **կատեգորիան**): Կամ էլ նա, օրինակ, պետք է ունենա հատուկ գիտելիքներ թվային տեխնոլոգիաների վերաբերյալ **SS կազմակերպության** համար դասընթաց վարելու նպատակով (տե՛ս «**տեխնիկական իրազեկություններ**» **կատեգորիան**): **ԵՊԱ-ի** օգնությամբ Դուք կարող եք դիտարկել Ձեր

ուսուցիչների անհատական պրոֆիլներն այդ ոլորտների վերաբերյալ, խորհրդակցել Ձեր կենտրոնում վերապատրաստման հարցերով զբաղվող անձանց հետ՝ կայացնելով հիմնավորված որոշում, թե ուսուցիչներից ում եք ընտրում այդ ծրագիրն իրագործելու համար:

Աջակցել ուսուցիչներին մասնագիտական հետագա զարգացման ժամանակ

Դուք աշխատակազմի զարգացման համար նախատեսված տարեկան բյուջե ունեք և ցանկանում եք, որ Ձեր ուսուցիչների մասնագիտական որակավորումը շարունակական բնույթ ունենա: Դրանով Դուք բարձրացնում եք ոչ միայն Ձեր հաստատության, այլ նաև առանձին ուսուցիչների պահանջարկը: Անհատական պրոֆիլները, որոնք երևում են ԵՊԱ-ի հիման վրա իրականացրած ինքնագնահատման մեջ, ցույց են տալիս նրանց ուժեղ և թույլ կողմերը: Դուք կենտրոնանում եք հատկապես **«որակավորում/փորձ»** և **«մասնագիտացում» կատեգորիաների** վրա: Ուսումնասիրե՛ք ինքնագնահատման արդյունքները և խոսե՛ք ուսուցիչների հետ վերապատրաստման վերաբերյալ նրանց ցանկությունների, նրանց ներկայիս պահանջների և ապագա ծրագրերի մասին: ԵՊԱ-ի հիման վրա անցկացվելիք գրույցը կօգնի Ձեզ խորհուրդներով աջակցել ուսուցիչներին, որպեսզի նրանք կարողանան հոգուտ մասնագիտական հետագա զարգացման որոշումներ կայացնել, օրինակ շարունակել մագիստրատուրան, կամ ձեռք բերել հետբուհական կրթության վկայական, անցնել վերապատրաստման դասընթացներ կամ մասնակցել ազգային/միջազգային սեմինարների կամ կոնֆերանսների:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Ինչու՞մ է կայանում լեզվական իրազեկության և լեզվական գիտակցության միջև առկա տարբերությունը:

Լեզվական իրազեկությունը նկարագրում է այն մակարդակը, որում գտնվում են օտար լեզվի իմացությունը և լեզուն գործածելու ունակությունը: Լեզվական գիտակցությունն իր մեջ ներառում է լեզվի, իր կառուցվածքի և իր գործածության վերաբերյալ իմացությունը և այլն (հմմ. Բառարանում՝ *լեզվական գիտակցություն*):

Ինչու՞ է ինձ հարկավոր լեզվագիտակցություն, եթե ես կարողանում եմ մի լեզվով շատ լավ խոսել և գրել:

Լեզվական գիտակցությունը հիմք է հանդիսանում այն բանի համար, որ ուսուցիչը կարողանա ընտրել, վերլուծել և բացատրել A1-C2 լեզվական մակարդակներին համապատասխան լեզվական երևույթները դասավանդման և ուսուցման նպատակով:

Կարո՞ղ եմ ինձ կրթություն/որակավորում բաժնում դասել 3.1/3.2 մակարդակին, եթե ես ավարտել եմ գերմաներեն լեզվի կամ լեզվաբանության ֆակուլտետի մագիստրատուրան, բայց չեմ հանձնել ոչ մի մանկավարժական մոդուլ:

Ինչպես նշված է, պետք է ավարտել օտար լեզվի դասավանդման մանկավարժության կուրս կամ մոդուլ, որն իր մեջ ներառում է նաև վերահսկվող դասավանդման պրակտիկա կամ ունենալ միջազգային ճանաչում ունեցող օտար լեզվի դասավանդման վկայական:

Ես համալսարանում սովորել եմ դիդակտիկա/մեթոդիկա, և մենք անցել ենք դասավանդման գործնական պրակտիկա, որը սակայն չի փաստագրվել և որից հետո մենք միայն բանավոր արձագանք ենք ստացել: Դա կարո՞ղ է նույնպես համարվել դասավանդման փորձ:

Եթե այդ գործնական պրակտիկան դիդակտիկա/մեթոդիկա կուրսի մաս է կազմել և եթե Դուք ստացել եք փաստագրված արձագանք, ապա դա համարվում է վերահսկվող դասավանդում:

Տվյալ լեզվի կենտրոնում չեն իրականացվում կանոնավոր դասալսումներ և չկան վերապատրաստողներ: Ինչպե՞ս ստանամ փաստագրված արձագանք իմ դասի վերաբերյալ:

Անհրաժեշտ է, որ Ձեր դասին հետևի Ձեր կենտրոնի վերապատրաստողներից կամ փորձառու ուսուցիչներից որևէ մեկը: Եթե հնարավոր է նման դասալսումներ իրականացնել Ձեր կենտրոնում, նույնիսկ ոչ կանոնավոր կերպով, ապա Դուք կարող եք խնդրել, որ այդ անձը տրամադրի Ձեզ գրավոր արձագանք:

Կարո՞ղ եմ ես հասնել 3.1 փուլին, եթե ես մասնագիտացել եմ երեխաների դասավանդման ոլորտում: Այդ դեպքում ես չունեմ դասավանդման փորձ 4 տարբեր համատեքստերում:

Դուք կարող եք հաշվի առնել Ձեր մասնագիտական ճանապարհին ձեռք բերած բազմաբնույթ փորձը տարբեր համատեքստերում, օրինակ՝ Ձեր դասավանդման փորձը պետական կամ մասնավոր դպրոցներում, հատուկ դասընթացների ժամանակ, տարբեր տարիքային խմբերի կամ անհատական դասընթացների սահմաններում (հմմ. բառարանում *համատեքստ*)

Ես բավականին փորձառու ուսուցիչ եմ և զգում եմ, որ պատրաստ եմ ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել՝ զարգանալով 3.2 փուլի ուղղությամբ: Ի՞նչ կարող եմ անել:

Դիմեք այն անձին, որը Ձեր կենտրոնում զբաղվում է վերապատրաստումներով կամ աշխատակիցների հարցերով, որպեսզի նրա հետ միասին քննարկեք, թե ինչ նոր առաջադրանքներ դուք կարող եք ստանձնել և ինչպես կարող եք Ձեր ուժերը գործածել, օրինակ՝ հետևել ավելի պակաս փորձ ունեցող Ձեր կոլլեգաներին կամ կազմակերպել վերապատրաստումներ գործնական դասընթացների կամ սեմինարների տեսքով:

Քանի՞ նկարագրություն պետք է նշեմ մի կատեգորիայի մեջ, որպեսզի համարվի, որ ես ավարտել եմ այդ փուլը:

ԵՊԱ-ն իրազեկությունը չի ներկայացնում թվերով: Այս գործիքը նպատակ է հետապնդում, որ Դուք գիտակցեք Ձեր իրազեկությունները և պարզեք, թե որ ոլորտներում եք ցանկանում զարգացնել Ձեր հմտությունները: Այսպես Դուք կկարողանաք տեսնել, թե մասնագիտական զարգացման որ փուլում եք գտնվում: Դուք կարող եք շարունակաբար ուսումնասիրել Ձեզ և գնահատել, այնպես, որ կարողանաք հետևել Ձեր առաջընթացին և մասնագիտական զարգացմանը: Նշեք միայն այն նկարագրությունները, որոնք համապատասխանում են Ձեր իրազեկություններին:

Նպատակահարմար է արդյոք, եթե ես որոշ կատեգորիաներում դասեմ ինձ 3.2 փուլին (օրինակ՝ կրթություն/որակավորում կատեգորիայում), իսկ մյուսներում՝ 2.2 փուլին (օրինակ՝ տեխնիկական իրազեկություններ կատեգորիայում):

Միանգամայն բնական է, որ ուսուցիչները տարբեր կատեգորիաներում ունեն տարբեր իրազեկություններ և որ նրանք ունեն ոչ կանոնակարգված պրոֆիլ:

Կարո՞ղ է արդյոք այն անձը, ով լեզվի կրող չէ, դասել ինքն իրեն 3.2 փուլին «լեզվի իմացություն» ենթակատեգորիայում:

Այո, եթե ուսուցիչն օտար լեզվի իր գիտելիքները հասցրել է մայրենի լեզվի մակարդակին (օրինակ, որովհետև նա մի քանի տարի ապրել կամ ուսանել է տվյալ երկրում) կամ եթե նա հանձնել է C2 քննություն և կարողանում է շատ բնական կերպով գործածել լեզուն:

Արդյո՞ք «միջմշակութային իրազեկություններ» ենթակատեգորիան արդիական է ինձ համար, եթե ես աշխատում եմ բացառապես միալեզու խմբերում և արտերկրում բազմամշակութային խմբերում դասավանդելու փորձ չունեմ:

Այո, կարևոր է զարգացնել Ձեր միջմշակութային գիտակցությունը և կարողանալ կանխատեսել միջմշակութային նուրբ խնդիրները, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանաք առերեսվել դրանց հետ, նույնիսկ, եթե նախկինում չէք ունեցել նման փորձ: Բացի դրանից Ձեր մասնագիտական ճանապարհին անպայման կհանդիպեն միջազգային ուսանողներ տարբեր էթնիկ կամ կրոնական հիմքերով: Այդ իրազեկությունը նաև պետք կգա, եթե Դուք դասավանդեք այն մարդկանց, ովքեր աշխատելու են արտասահմանյան կազմակերպություններում, և եթե հարկավոր լինի նպատակային այդ խմբի համար ընտրել ուսումնական նյութեր, որոնք համապատասխանում են Ձեր ուսանողների մշակութային համատեքստին, անհրաժեշտության դեպքում զարգացնել սոցիալական և մշակութային ընդհանրություններն ու տարբերությունները վերլուծելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ քննարկումներ անցկացնելու ունակությունը: Հնարավոր է նաև, որ Ձեր լեզվի կենտրոնում աշխատեն մշակութային այլ ծագման կամ ազգության ուսուցիչներ, որոնք Ձեր օգնության/խորհրդի կարիքը կունենան:

Կարո՞ղ եմ արդյոք ԵՊԱ-ն օգտագործել որպես դասալսումների համար նախատեսված հատուկ հարցաշար, երբ հետևում եմ իմ կոլլեգաներին դասավանդելիս:

ԵՊԱ-ն չի հանդիսանում գործիք դասալսման համար: Այդուհանդերձ հնարավոր է, որ որոշ նկարագրություններ նպատակահարմար լինեն դասալսման ժամանակ որոշ ասպեկտներ ուսումնասիրելու համար, օրինակ՝ «փոխգործակցության վերահսկում» կատեգորիայում:

ԴԱՏԱՐԿ ԱՂՅՈՒՄԱԿ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՍ ՈՒՐԻՇԻՆ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ուսուցչի անունը՝

Ամսաթիվ՝

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՐՁ	ՓՈՒԼ 1		ՓՈՒԼ 2		ՓՈՒԼ 3	
	1.1	1.2	2.1	2.2	3.1	3.2
Լեզվի իմացություն						
Կրթություն/որակավորում						
Գնահատվող դասավանդում						
Դասավանդման փորձ						

ԴԱՍԱՎԱՆՂՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մեթոդիկա/դիդակտիկա					
	Դասերի և դասընթացների կազմակերպում					
	Փոխգործակցության վերահսկում					
	Գնահատում					

ԱՅԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Միջմշակութային իրազեկություններ					
	Լեզվագիտակցություն					
	Տեխնիկական իրազեկություններ					

ՄԱՍՆԱԳԻՏՍՈՒՄ	Մասնագիտական վերապատրաստում					
	Ադմինիստրացիա					

ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՆՄՈՒՇՆԵՐ

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՒՉ	ՈՒՍՈՒՑԻՉ Ա	ՓՈՒԼ 1		ՓՈՒԼ 2		ՓՈՒԼ 3	
		1.1	1.2	2.1	2.2	3.1	3.2
	Լեզվի իմացություն						
	Կրթություն/որակավորում						
	Գնահատվող դասավանդում						
	Դասավանդման փորձ						

ԴԱՍԱՎԱՆ ԴՍԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մեթոդիկա/դիդակտիկա						
	Դասերի և դասընթացների կազմակերպում						
	Փոխգործակցության վերահսկում						
	Գնահատում						

ԱՅԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Միջմշակութային իրազեկություններ						
	Լեզվագիտակցություն						
	Տեխնիկական իրազեկություններ						

ՄԱՍՆԱԳԻՏԱ ՑՈՒՄ	Մասնագիտական վերապատրաստում						
	Ադմինիստրացիա						

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՐՁ	ՈՒՍՈՒՑԻՉ Բ	ՓՈՒԼ 1		ՓՈՒԼ 2		ՓՈՒԼ 3	
		1.1	1.2	2.1	2.2	3.1	3.2
	Լեզվի իմացություն						
	Կրթություն/որակավորում						
	Գնահատվող դասավանդում						
	Դասավանդման փորձ						

ԴԱՍԱՎԱՆՈՒՄ ՆԻՍՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մեթոդիկա/դիդակտիկա						
	Դասերի և դասընթացների կազմակերպում						
	Փոխգործակցության վերահսկում						
	Գնահատում						

ԱՅԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Միջմշակութային իրազեկություններ						
	Լեզվագիտակցություն						
	Տեխնիկական իրազեկություններ						

ՄԱՍՆԱԳԻՏՈՒՄ	Մասնագիտական վերապատրաստում						
	Աղմինիստրացիա						

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՐՁ	ՊՐԱԿՏԻԿԱՆՏ Ա	ՓՈՒԼ 1		ՓՈՒԼ 2		ՓՈՒԼ 3	
		1.1	1.2	2.1	2.2	3.1	3.2
	Լեզվի իմացություն						
	Կրթություն/որակավորում						
	Գնահատվող դասավանդում						
	Դասավանդման փորձ						

ԴԱՍԱՎԱՆՈՒՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մեթոդիկա/դիդակտիկա						
	Դասերի և դասընթացների կազմակերպում						
	Փոխգործակցության վերահսկում						
	Գնահատում						

ԱՅԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Միջմշակութային իրազեկություններ						
	Լեզվագիտակցություն						
	Տեխնիկական իրազեկություններ						

ՄԱՍՆԱԳԻՏԱ ՑՈՒՄ	Մասնագիտական վերապատրաստում						
	Ադմինիստրացիա						

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻՑ

ԵՊԱ-ի էլեկտրոնային տարբերակն ինտերակտիվ առցանց ձև է 4 լեզվով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն), որը կարող եք գտնել <http://egrid.epg-project.eu/en> հասցեով: Այս տարբերակի հիմնական նպատակն է օգտվողների համար ավելի հասանելի դարձնել ԵՊԱ-ն և բարելավել նրա գործառնությունը:

1. Գլխավոր էջում (<http://egrid.epg-project.eu/en>) օգտատերերը կարող են՝
 - ա) Ուսումնասիրել ԵՊԱ-ի բովանդակությունն ըստ առանձին իրազեկությունների ինք լեզվով՝ սեղմելով «Մուտք դեպի էլեկտրոնային ԵՊԱ»: Աղյուսակի էլեկտրոնային տարբերակում կան բառարանում առկա հասկացությունների համապատասխան հղումները: Երբ մկնիկով պահում եք կանաչ գույնով նշված բառի վրա, հայտնվում է սահմանումը (կարիք չկա սեղմել այն):
 - բ) Ներբեռնել ողջ պրոֆիլային աղյուսակի PDF տարբերակը՝ բառարանի հետ միասին՝ որպես հավելված, կամ առանց դրա:
 - գ) Ներբեռնել ուղեցույցը:

Ցանկացած պահի, սեղմելով էլեկտրոնային աղյուսակի լոգոն, դուք կվերադառնաք գլխավոր էջ:

2. Գլխավոր էջի ներքևում կա առանձին երեք հատված՝
 - «Ուսուցիչներ» հատվածում դասավանդողները կարող են գնահատել իրենց իրազեկությունները,
 - «Վերապատրաստողներ» հատվածում վերապատրաստողները կարող են գնահատել այն դասավանդողների կամ պրակտիկանտների իրազեկությունները, որոնց հետ նրանք աշխատում են կամ աշխատելու են,
 - «Տնօրեններ» հատվածում լեզվի կենտրոնների մանկավարժական ղեկավարները կարող են հետևել իրենց ուսուցիչների մասնագիտական զարգացմանը կամ կազմել թիմային պրոֆիլ:

Սեղմելով այս երեք հատվածներից մեկի վրա՝ Դուք հասնում եք այն էջին, որտեղ կարող եք ընտրել կամ «Նոր պրոֆիլ ստեղծել» կամ «Առկա պրոֆիլը ներմուծել»:

ա) Եթե Դուք ընտրում եք «Նոր պրոֆիլ ստեղծել», ապա կտեսնեք մի առցանց ձև, որի մեջ պետք է լրացվեն այն դասավանդողի անձնական տվյալները, ում իրազեկությունները պետք է գնահատվեն: Լեզվի կենտրոնի վերաբերյալ տեղեկությունները նույնպես անհրաժեշտ են: Եթե Դուք ինքներդ Ձեզ եք գնահատում որպես ուսուցիչ, ապա կարող եք նաև ներբեռնել նկար: Եթե դուք կազմում եք պրոֆիլը որպես վերապատրաստող կամ տնօրեն, ապա պետք է նաև որոշ տվյալներ լրացնեք Ձեր անձի վերաբերյալ: Այս կայքէջում լրացվող ոչ մի տեղեկություն չի պահպանվում կամ փոխանցվում. այս տեղեկությունները բացառապես գրանցվում են Ձեր համակարգչում, ընդ որում այնքան ժամանակ, մինչ Դուք չդատարկեք բրաուզերի հիշողությունը կամ էկրանի վերևի մասում չսեղմեք «Ձնջել բոլոր տվյալները» կոճակը: Այդ կոճակը կարելի է գործածել ցանկացած ժամանակ, նույնիսկ եթե պրոֆիլը դեռ պատրաստ չէ: Ինքնագնահատման կամ ուրիշին գնահատելու արդյունքները Դուք կարող եք

գրանցել երկու ձևաչափով՝ PDF կամ egrid տարբերակներով: Egrid-ձևաչափը Ձեզ հնարավորություն կտա ցանկացած պահի թարմացնել պրոֆիլը:

բ) Եթե Դուք ուզում եք մշակել egrid ձևաչափով արդեն իսկ առկա պրոֆիլ, ապա պետք է փնտրեք Ձեր համակարգչում, որպեսզի ներբեռնեք ֆայլը ԵՊԱ-Էլեկտրոնային տարբերակի էջում: Պրոֆիլը կարող է մշակվել միայն այդ կայքում:

Դուք ՈՒՍՈՒՑԻՉ եք և ուզում եք ինքնագնահատում անցկացնել՝

ա) Ձեր անձի և լեզվի կենտրոնի վերաբերյալ անհրաժեշտ բոլոր տվյալները լրացնելով առցանց ձևի մեջ (աստղանիշով նշված հատվածները պարտադիր են) և սեղմելով «Հաստատել և շարունակել» կոճակը՝ Դուք կտեսնեք պրոֆիլային աղյուսակի մի տարբերակ, որտեղ Դուք առանձին կատեգորիաներում (օր.՝ դասերի և դասընթացների կազմակերպում) կարող եք թերթել մի նկարագրությունից մյուսը և դրանով ամեն մի փուլից մյուս փուլ Ձեզ համապատասխան նկարագրությունն ընտրելու համար: Այն փուլը, որը համապատասխանում է ընտրված նկարագրությանը, կհայտնվի աջ կողմում ամփոփված տարբերակում:

բ) Սեղմելով համապատասխան կատեգորիաների վրա՝ Դուք կարող եք վերադառնալ յուրաքանչյուր առանձին կատեգորիայի՝ փոփոխելու Ձեր պրոֆիլը, եթե կարծում եք, թե չափազանց մեղմ կամ խիստ եք գնահատել ինքներդ Ձեզ: Դուք կարող եք նաև բաց թողնել որոշ կատեգորիաներ և անհրաժեշտության դեպքում ավելի ուշ անդրադառնալ դրանց, եթե տվյալ պահին դրանք այդքան էլ էական չեն թվում: Դուք դա կարող եք անել՝ սեղմելով «Բաց թողնել այս քայլը» կոճակը:

գ) Եթե Դուք գնահատեցիք Ձեզ բոլոր ցանկալի կատեգորիաներում, կարող եք սեղմել «Արդյունքներ» կոճակը և կտեսնեք պրոֆիլի ամփոփված տարբերակը սյունագծերով դիագրամի տեսքով: Այնտեղ նշված են Ձեր անունն ու անձնական տվյալները, ինչպես նաև Ձեր լուսանկարը, եթե ներբեռնել եք այն: Այդ արդյունքները կարող եք պահպանել որպես PDF կամ egrid ֆայլ: Եթե հետագայում ցանկանաք փոփոխել Ձեր պրոֆիլը, պետք է ընտրեք egrid ձևաչափը: Ձեր տվյալները և պրոֆիլը չեն պահպանվում կայքէջում: Տվյալները պահպանվում են միայն Ձեր բրաուզերի վրա. դրանք ջնջելու համար, հիշե՛ք, որ պետք է վերջում սեղմեք «Չնջել բոլոր տվյալները» կոճակը: Դուք կարող եք Ձեր պրոֆիլը PDF կամ egrid ձևաչափով որպես հավելված ուղարկել Ձեր կամ մեկ ուրիշ անձի (օր.՝ Ձեր ուսուցչի կամ վերապատրաստողի) էլեկտրոնային հասցեին: Դուք այն կարող եք նաև տպել:

Դուք ՈՒՍՈՒՑԻՉ եք և ուզում եք փոփոխել ինքնագնահատման արդեն առկա տարբերակը՝

ա) Ներբեռնելով Ձեր պրոֆիլը egrid ձևաչափով՝ կհայտնվի պրոֆիլի ամփոփված տարբերակը՝ Ձեր անձնական տվյալներով և իրազեկություններով, սյունագծերով դիագրամի տեսքով: Եթե ցանկանում եք փոփոխել տվյալները, որովհետև, օրինակ, որոշ ոլորտներում բարելավել եք Ձեր իրազեկությունները, պետք է պարզապես սեղմել աջ կողմում գտնվող համապատասխան կատեգորիան և ընտրել մեկ այլ նկարագրություն:

բ) Սեղմելով «Հաստատել և շարունակել» կոճակը՝ փոփոխված ինքնագնահատման տարբերակը կպահպանվի և նոր իրազեկությունները կհայտնվեն աջ կողմում ամփոփված տարբերակում: Նոր տվյալները նույնպես կարող եք ուղարկել կամ տպել:

Դուք ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ եք և ուզում եք գնահատել ուսուցչի կամ վերապատրաստում անցնող անձի՝

ա) Սկզբում Դուք պետք է առցանց ձևի մեջ տեղադրեք այն անձի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները, ում պրոֆիլը ցանկանում եք ստեղծել, ինչպես նաև Ձեր անունը, էլ. հասցեն և գործառույթները:

բ) Այնուհետև կարող եք սկսել համապատասխան ուսուցչի գնահատումը: Դուք կարող եք թերթել առանձին կատեգորիաները՝ համապատասխան փուլի նկարագրություններն ուսումնասիրել այնքան, մինչև որ գտնեք այն նկարագրությունը, որն ըստ Ձեզ արդիական է այն անձի համար, ում գնահատում եք: Ընտրեք այն՝ սեղմելով կոճակը: Դուք կարող եք բաց թողնել այն կատեգորիաները, որոնք չեք կարող կամ չեք ցանկանում գնահատել՝ սեղմելով «Բաց թողնել այս քայլը» կոճակը:

գ) Եթե ցանկանում եք ավարտել գնահատումը, սեղմեք «Հաստատել և շարունակել» կոճակը, և կտեսնեք ուսուցչի պրոֆիլի ամփոփված տարբերակը պունագծերով դիագրամի տեսքով: Եթե Դուք կարծում եք, որ այս գնահատումը դեռևս բոլոր կատեգորիաներին չի անդրադառնում, կարող եք աջ կողմում սեղմել համապատասխան կատեգորիան և ընտրել մեկ այլ նկարագրություն: Այդպես Դուք կարող եք փոխել Ձեր գնահատումը:

դ) Եթե վերջացրել եք, կարող եք պահպանել Ձեր գնահատումը PDF կամ egrid ձևաչափով: Ցանկալի է ընտրել egrid ձևաչափը, եթե պատրաստվում եք հետագայում նորից անդրադառնալ այդ պրոֆիլին, օրինակ՝ տվյալ անձի իրազեկություններն այլ կատեգորիաներում ավելացնելու կամ նրան անդրադարձ տալուց հետո նորովի գնահատելու նպատակով: Դուք կարող եք պատրաստի պրոֆիլը տպել և ստորագրել՝ հանձնելով այն գնահատված անձին: Դուք այն կարող եք նաև որպես հավելված ուղարկել էլ. հասցեով, որպեսզի այդ թուղթը քննարկումների ժամանակ լինի թե՛ Ձեր և թե՛ ուսուցչի ձեռքերի տակ: Մի՛ մոռացեք սեղմել «Ձնջել բոլոր տվյալները» կոճակը բրաուզերում փահպանված բոլոր տվյալները ջնջելու համար:

ե) Ուսուցիչների հետ անցկացվող գրույցների ժամանակ շատ արդյունավետ կարող է լինել համեմատել ինքնագնահատումն ուրիշի կողմից իրականացված գնահատման հետ: Նման գրույցը կարող է օգնել հասկանալ, թե մասնագիտական վերապատրաստման որ ոլորտներում են ուսուցիչները տեսնում իրենց կարիքները և որտեղ են տարբերությունները գնահատման մեջ: Շատ կարևոր է պարզել, թե ինչու են գնահատման մեջ ի հայտ եկել տարբերություններ, քանի որ ուսուցիչներին հատուկ է որոշ չափով գերա- կամ թերագնահատել իրենց: Զրույցի արդյունքը կարող է հանգեցնել երկկողմանի նոր գնահատման:

Դուք ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ եք և ուզում եք փոփոխել պրոֆիլի արդեն առկա տարբերակը՝

ա) Դուք պետք է կայքէջում ներբեռնեք Ձեր կամ Ձեր կողմեցայի կողմից կազմված պրոֆիլը egrid ձևաչափով:

բ) Կհայտնվի համապատասխան պրոֆիլի ամփոփված տարբերակը անձնական տվյալներով և իրազեկություններով՝ պունագծերով դիագրամի տեսքով: Հիմա կարող եք տվյալ անձի իրազեկությունների գնահատումը փոփոխել, եթե օրինակ դասալսման արդյունքում այլ եզրակացության եք հանգել կամ եթե ցանկանում եք անդրադառնալ այն ոլորտներին, որոնք դեռ չեք գնահատել: Դրա համար Ձեզ պարզապես պետք է սեղմել աջ կողմում գտնվող համապատասխան կատեգորիան և ընտրել մեկ այլ նկարագրություն:

գ) Սեղմելով «Հաստատել և շարունակել» կոճակը՝ թարմացված տարբերակը կպահպանվի և նոր իրազեկությունները կհայտնվեն աջ կողմում ամփոփված տարբերակի մեջ: Նոր տվյալները կարելի է սովորության համաձայն պահպանել PDF կամ egrid ձևաչափով, ուղարկել կամ տպել: Մի՛ մոռացեք սեղմել «Ձնջել բոլոր տվյալները» կոճակը բրաուզերում փահպանված բոլոր տվյալները ջնջելու համար:

Դուք ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆ եք և ուզում եք Ձեր աշխատանքային խմբի ուսուցիչներից մեկին գնահատել՝

ա) Սկզբում Դուք պետք է առցանց ձևի մեջ տեղադրեք այն անձի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները, ում պրոֆիլը ցանկանում եք ստեղծել, ինչպես նաև Ձեր անունը, էլ. հասցեն և գործառույթները:

բ) Այնուհետև կարող եք սկսել համապատասխան ուսուցչի գնահատումը: Դուք կարող եք թերթել առանձին կատեգորիաները՝ համապատասխան փուլի նկարագրություններն ուսումնասիրել այնքան, մինչև որ գտնեք այն նկարագրությունը, որն ըստ Ձեզ արդիական է այն անձի համար, ում որ գնահատում եք: Ընտրեք այն՝ սեղմելով կոճակը: Դուք կարող եք բաց թողնել այն կատեգորիաները, որոնք չեք կարող կամ չեք ցանկանում գնահատել՝ սեղմելով «Բաց թողնել այս քայլը» կոճակը:

գ) Եթե ցանկանում եք ավարտել գնահատումը, սեղմեք «Հաստատել և շարունակել» կոճակը, և կտեսնեք ուսուցչի պրոֆիլի ամփոփված տարբերակը պունագծերով դիագրամի տեսքով: Եթե կարծում եք, որ այս գնահատումը դեռևս բոլոր կատեգորիաներին չի անդրադառնում, կարող եք աջ կողմում սեղմել համապատասխան կատեգորիան և ընտրել մեկ այլ նկարագրություն: Այդպես կարող եք փոփոխել Ձեր գնահատումը:

դ) Եթե վերջացրել եք, կարող եք պահպանել գնահատումը PDF կամ egrid ձևաչափով: Ցանկալի է ընտրել egrid ձևաչափը, եթե պատրաստվում եք հետագայում նորից անդրադառնալ այդ պրոֆիլին, օրինակ՝ տվյալ անձի իրազեկություններն այլ կատեգորիաներում ավելացնելու կամ նրանց անդրադարձ տալուց հետո նորովի գնահատելու նպատակով: Դուք կարող եք պատրաստի պրոֆիլը տպել և ստորագրել՝ հանձնելով այն գնահատված անձին: Դա հարմար է հատկապես այն դեպքում, եթե ուսուցիչը պատրաստվում է դուրս գալ լեզվի կենտրոնից կամ փնտրում է նոր աշխատանք և

ցանկանում է թերթիկը կցել անձնական մյուս փաստաթղթերին: Դուք այն կարող եք նաև որպես հավելված ուղարկել էլ. հասցեով, եթե ուսուցիչը շարունակելու է աշխատել Ձեզ մոտ, որպեսզի այդ թուղթը քննարկումների ժամանակ լինի թե՛ Ձեր և թե՛ ուսուցչի ձեռքերի տակ: Մի՛ մոռացեք սեղմել «Ձնջել բոլոր տվյալները» կոճակը բրաուզերում փահպանված բոլոր տվյալները ջնջելու համար:

ե) Եթե վերջացրել եք ուսուցչի գնահատումը, ապա կարող եք սեղմելով աջ կողմում վերևում գտնվող «+ նոր գնահատում» կոճակը բացել նոր պրոֆիլ այլ աշխատողի գնահատելու համար: Այդպես կարող եք շարունակել, մինչև որ կազմեք բոլոր աշխատողների պրոֆիլները:

զ) ԵՊԱ էլեկտրոնային տարբերակի օգտավետ գործառնությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս կազմել թիմային պրոֆիլ, թե՛ որպես ողջ անձնակազմի և թե՛ որպես ուսուցիչների առանձին խմբերի պրոֆիլ: Եթե ցանկանում եք դա իրականացնել, սեղմեք Ձեր կողմից կազմած վերջին պրոֆիլի վերևում գտնվող «Արդյունքներ» կոճակը: Դուք կարող եք արդյունքների երկու տեսակի պատկեր ընտրել՝ մեկն ըստ ուսուցիչների (այն ներկայացնում է ուսուցիչների առանձին պրոֆիլները կողք կողքի) և մյուսն ըստ իրազեկությունների (այն ներկայացնում է, թե որտեղ են գտնվում ուսուցիչներն իրազեկությունների առանձին ոլորտներում: Տե՛ս հաջորդ էջում պատկերված օրինակը): Նմանատիպ թիմային պրոֆիլներն օգնում են ընտրել տարբեր դասընթացների համար համապատասխան ուսուցչի կամ աշխատակազմը նպատակաուղղված համալրել թիմում բացակայող իրազեկություններ ունեցող ուսուցիչներով:

Արդյունքներն ըստ ուսուցիչների



Ժան Դյուպոն



Ջուլիանե Անրի



Մարիաննե Մարտին

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՐՁ		ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՐՁ		ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ/ՓՈՐՁ	
Լեզվի իմացություն	1.1	Լեզվի իմացություն	3.2	Լեզվի իմացություն	3.2
Կրթություն/Որակավորում	2.2	Կրթություն/Որակավորում	3.2	Կրթություն/Որակավորում	3.2
Գնահատվող դասավանդում	3.2	Գնահատվող դասավանդում	1.1	Գնահատվող դասավանդում	3.1
Դասավանդման փորձ	1.2	Դասավանդման փորձ	3.2	Դասավանդման փորձ	2.2
ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Դիդակտիկա/Մեթոդիկա	2.2	Դիդակտիկա/Մեթոդիկա	3.1	Դիդակտիկա/Մեթոդիկա	3.1
Գնահատում	3.1	Գնահատում	1.2	Գնահատում	2.1
Դասերի և դասընթացների կազմակերպում	2.2	Դասերի և դասընթացների կազմակերպում	2.2	Դասերի և դասընթացների կազմակերպում	1.1
Փոխգործակցության վերահսկում	1.1	Փոխգործակցության վերահսկում	3.2	Փոխգործակցության վերահսկում	3.1
ԱՅԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԱՅԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԱՅԼ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Միջմշակութային իրազեկություններ	2.2	Միջմշակութային իրազեկություններ	3.2	Միջմշակութային իրազեկություններ	1.2
Լեզվագիտակցություն	2.1	Լեզվագիտակցություն	3.2	Լեզվագիտակցություն	2.2
Տեխնիկական իրազեկություններ	3.1	Տեխնիկական իրազեկություններ	2.1	Տեխնիկական իրազեկություններ	1.2
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ		ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ		ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ	
Մասնագիտական զարգացում	2.2	Մասնագիտական զարգացում	2.2	Մասնագիտական զարգացում	3.1
Ադմինիստրացիա	1.2	Ադմինիստրացիա	2.1	Ադմինիստրացիա	3.2

Արդյունքներն ըստ իրազեկությունների

	1.1	1.2	2.1	2.2	3.1	3.2
Լեզվի իմացություն	Ժ. Դյուպոն					Ջ. Անրի/ Մ.Մարտին
Կրթություն/Որակավորում				Ժ. Դյուպոն		Ջ. Անրի/ Մ.Մարտին
Գնահատվող դասավանդում	Ջ. Անրի				Մ.Մարտին	Ժ. Դյուպոն
Դասավանդման փորձ		Ժ. Դյուպոն		Մ.Մարտին		Ջ. Անրի
Դիդակտիկա/Մեթոդիկա				Ժ. Դյուպոն	Ջ. Անրի/ Մ.Մարտին	
Գնահատում		Ջ. Անրի	Մ.Մարտին		Ժ. Դյուպոն	
Դասերի և դասընթացների կազմակերպում	Մ. Մարտին			Ժ. Դյուպոն/ Ջ. Անրի		
Փոխգործակցության վերահսկում	Ժ. Դյուպոն				Մ.Մարտին	Ջ. Անրի
Միջնակության իրազեկություններ		Մ.Մարտին		Ժ. Դյուպոն		Ջ. Անրի
Լեզվագիտակցություն			Ժ. Դյուպոն	Մ.Մարտին		Ջ. Անրի
Տեխնիկական իրազեկություններ		Մ.Մարտին	Ջ. Անրի		Ժ. Դյուպոն	
Մասնագիտական զարգացում				Ժ. Դյուպոն/ Ջ. Անրի	Մ.Մարտին	
Ադմինիստրացիա		Ժ. Դյուպոն	Ջ. Անրի			Մ.Մարտին

Դուք ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆ ԵՔ և ուզում եք մշակել առկա պրոֆիլը՝

ա) Դուք պետք է սկզբում ներբեռնեք ուսուցչի պահպանված պրոֆիլը egrid-ձևաչափով:

բ) Կհայտնվի տվյալ ուսուցչի պրոֆիլն իր անձնական տվյալներով և իրազեկություններով նախորդ գնահատումից պահպանված: Այժմ կարող եք փոփոխել տվյալ անձի գնահատած իրազեկությունները, եթե Դուք, օրինակ, դասալսման արդյունքում այլ եզրակացության եք եկել կամ եթե կարող եք գնահատել իրազեկությունների դեռևս չմշակված ոլորտները: Դրա համար պարզապես պետք է սեղմել աջ կողմում գտնվող համապատասխան կատեգորիայի վրա և ընտրել մյուս նկարագրությունը: Դա հատկապես կարող է օգտակար լինել, եթե իրականացնում եք կանոնավոր դասալսումներ՝ Ձեր ուսուցիչներին ուսումնական արձագանք տալու համար: Ինքնագնահատման և ուրիշին գնահատելու նմանատիպ համեմատական քննարկումները շատ նշանակալից են և հիմք են հանդիսանում ուսուցիչների անհատական վերապատրաստումների ծրագրման համար:

գ) Սեղմելով «Հաստատել և շարունակել» կոճակը՝ թարմացված գնահատումը կպահպանվի և նոր իրազեկությունները կհայտնվեն նկարագրի աջ կողմում: Նոր տվյալները կարելի է կրկին պահպանել PDF կամ egrid ձևաչափերով, ուղարկել դրանք կամ տպել: Մի՛ մոռացեք սեղմել «Ձնջել բոլոր տվյալները» բրաուզերի բոլոր պահպանված տվյալները ջնջելու համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Ծրագրի գլխավոր գործընկերներ՝

Centre International d'études pédagogiques (CIEP), Ֆրանսիա (կազմակերպում և տարածում)
Olivier Steffen, Pernelle Benoit, Jeanne Collin

Evaluation & Accreditation of Quality in Language Services (EAQUALS), Միացյալ
Թագավորություն (փորձարկում)
Richard Rossner, Brian North, Joanna Watson, Anna Andor

British Council, Միացյալ Թագավորություն (որակի երաշխավորում)
Tim Phillips and Maggie Milne

Instituto Cervantes, Իսպանիա (թարգմանություն)
Elena Verdía Lleó, Marta Higuera García, Conchi Rodrigo Somolinos, Margarita Hornillos
Jerez, Àngels Ferrer Rovira

Bulgarian Association for Quality Language Services (OPTIMA), Բուլղարիա (բովանդակության
մշակում)
Galya Mateva, Daniela Rainova, Svetla Tashevska, Albena Vitanova

Goethe-Institut e.V., Գերմանիա (շահագործում)
Karin Ende, Imke Mohr, Rafael Descka

Այլ գործընկերներ՝

Center für berufsbezogene Sprachen (CEBS), Ավստրիա: Helmut Renner

ELS-Bell Education Ltd (ELS Bell), Լեհաստան: Ludka Kotarska, Małgorzata Imbierowicz

Università per Stranieri di Siena (UNISTRASI), Իտալիա: Pierangela Diadori, Roberto Tomassetti

Hogeschool van Amsterdam DOO (HvA), Նիդերլանդներ: Aad Sinke

Sabancı Üniversitesi (SU), Թուրքիա: Deniz Kurtoglu-Eken

Թարգմանության համար պատասխանատու են՝

	ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ	ՈՒՂԵՑՈՒՅՑ	ԲԱՌԱՐԱՆ	ԵՊԱ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ
ԲՈՒԼՂԱՐԵՐԵՆ	Galya Mateva Daniela Rainova, Svetla Tashevsk, Albena Vitanova	Galya Mateva Svetla Tashevsk, Albena Vitanova		
ԱՆԳԼԵՐԵՆ				Tim Phillips, Phil White, Martin Heineberg
ՖՐԱՆՍԵՐԵՆ				
ԳԵՐՄԱՆԵՐԵՆ	Imke Mohr, Rafael Deschka, Karin Ende	Imke Mohr, Rafael Deschka, Karin Ende	Imke Mohr, Rafael Deschka, Karin Ende	Imke Mohr, Rafael Deschka, Karin Ende
ԼԵՉԵՐԵՆ	Ludka Kotarska, Małgorzata Imbierowicz			
ԻՍՊԱՆԵՐԵՆ	Margarita Hornillos Jerez Elena Verdía Lleó Marta Higuera García Àngels Ferrer Rovira Conchi Rodrigo Somolinos Sonia Izquierdo Ramón	Margarita Hornillos Jerez Elena Verdía Lleó	Margarita Hornillos Jerez Elena Verdía Lleó Marta Higuera García Conchi Rodrigo Somolinos	Margarita Hornillos Jerez Elena Verdía Lleó Juan Francisco Urbán Parra
ԹՈՒՐԳԵՐԵՆ	Deniz Kurtoglu- Eken			

Հաստատություններ/Կազմակերպություններ, որոնք ծրագրի գործընկերների հետ մեկտեղ մասնակից են եղել պրոֆիլային աղյուսակի առաջին տարբերակի փորձարկմանը՝

Ավստրիա	Foreign Language Centre Graz; University of Vienna
Բոսնիա և Հերցեգովինա	Anglia V, Bijeljina
Բուլղարիա	Avo-Bell, Sofia; British-Bulgarian Information and Language Centre, Sofia; Matevi Language Centre, Sofia; New Bulgarian University, Sofia
Ֆրանսիա	Accent Français ; Alliance française de Lyon ; Alpha b ; Carel ; CIA d'Antibes ; French in Normandy ; IFALPES ; IS Aix en Provence ; Paris Langues ; Quai d'Orsay ; Université Blaise Pascal
Գերմանիա	Eurocentres Berlin; Ludwig-Maximilian-University, Munich; Friedrich-Schiller-University, Jena; University of Flensburg Foreign Languages Department; Georg-August University, Göttingen
Իռլանդիա	International House Dublin
Իտալիա	Torre di Babele; Universita' Upter
Ռումինիա	Institut Français de Roumanie
Իսպանիա	CLIC Sevilla; International House Madrid; Instituto Hemingway (Bilbao); Universidad Internacional Menéndez Pelayo; Inhispania; Alcelenguas; Esade language centre univ. Ramon llull; Escuela Oficial de Idiomas Barcelona-Drassanes; Babylon Idiomas; Don Quijote Tenerife; Enforex Valencia; Fundación José Ortega y Gasset;; Universidad de Las Palmas de Gran Canaria; Universidad de Vigo - Facultad de Filología y Centro de Linguas; Academia Atlántika; Escuela Superior de Español de Sagunto; Universidad de Zaragoza, UIMP, Fundación Comillas, Universidad de La Rioja
Միացյալ Թագավորություն	International House London; ELC Edinburgh: Eurocentres London, Eurocentres Brighton, Eurocentres Bournemouth, Eurocentres Cambridge

ԵՊԱ-ծրագրի ողջ անձնակազմը շնորհակալություն է հայտնում նաև 64 երկրներից մոտ 200 ուսուցիչների, որոնք մասնակցել են պրոֆիլային աղյուսակի առաջին տարբերակի վավերացման հետ կապված առցանց հարցումներին, ինչպես նաև 100 վերապատրաստողներին և լեզվի կենտրոնների տնօրեններին, որոնք անձամբ, հեռախոսով կամ էլեկտրոնային փոստի միջոցով մասնակից են եղել փորձարկմանը: